

ԱՐԽԻՎՅԻՆ ՎԱԽԵՐԱԳՐԵՐ ԶԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ*

Բանալի բառեր – «Նեմեսիս», Զեմալ փաշա, ՀՅ Դաշնակցություն, Ստեփան Ծաղիկեան, Պետրոս Տէր-Պօղոսեան, Արտաշէս Գէորգեան, ՀՅԴ Վրաստանի կենտրոնական կոմիտէ, վրիժառուններ, ձերբակալություններ:

1919 թուականի աշնանը անկախ Հայաստանի մայրաքաղաք Երևանում տեղի ունեցած ՀՅ Դաշնակցութեան 9-րդ Ընդհանուր Ժողովը¹ պատմական և յանդուգն որոշում է կայացնում Մեծ Եղեռնի պատասխանատու երիտթուրք պարագլուխներին ու Արևելեան Անդրկովկասում նրանց քաղաքականությունը շարունակած մուսաւաթական ելուզակներին պատժելու մասին, որն այնուհետև պատմութեան մէջ է մտնում «Նեմեսիս» արդարահատոյց գործողութիւն անուամբ:

Գործողութեան պատասխանատու մարմնի ղեկավար է նշանակւում յայտնի յեղափոխական և քաղաքական գործիչ դր. Գարեգին Փաստրմաձեանը (Արմէն Գարօ)², իսկ անդամներ՝ Յակոբ Տէր-Յակոբեանը (Շահան Նաթալի) և Գրիգոր Մերջանեանը (Մերջանով): Կազմում է Ընդհանուր ցանկը այն երիտթուրք և մուսաւաթական պատասխանատուների, ովքեր մասնակից կան աջակից էին եղել Հայոց Եղեռնին, Կովկասեան ջարդերին, ինչպէս նաև նրանց աջակցած հայանուն մատնիչների:

Այդ ցանկը ուղարկւում է ՀՅ Դաշնակցութեան բոլոր Կենտրոնական Կոմիտէներին աշխարհի զանազան կողմերում, որպէսզի նրանում ներառուած որևէ անհատ այդ մարմնի տարածքում յայտնուելիս տեղական մարմինն ինքը գործադրի Ընդհանուր Ժողովի որոշումը:

Այդ որոշման արդիւնքում 1921-1922 թուականներին պատժուեցին Թալէաթը, Սայիդ Հալիմ փաշան, Բեհաէդդին Շաքիրը, Զիւանշիրը և ուրիշներ: Հետագայում նրանց վրայ ձեռք բարձրացրած վրիժառուններն իրենք պատմեցին իրենց կատարած գործողութիւնների մասին³: Բացառութիւն կազմեց Զեմալի ահաբեկումը, որը տեղի ունեցաւ 1922 թուականի յուլիսի 21-ին՝ Խորհրդային Վրաստանում:

* Ընդունվել է տպագրության 28.07.2017: Պահպանված է հողվածի բնագրային ուղղագրությունը:

1 Մեծ Եղեռնից յետոյ սա ՀՅ Դաշնակցութեան առաջին Ընդհանուր Ժողովն էր:

2 Արմէն Գարօն այդ օրերին ՀՀ դեսպանն էր ԱՄՆ-ում:

3 Տես **Թեհլիրեան Սողոմոն**, Վերլիշումներ, գրի առաւ **Վահան Մինախորեան**, Գահիրէ, 1953:

Շիրակեան Արշաիր, Կտակն էր նահատակներուն, Պէյրութ, 1965: **Երկանեան Արամ**, Այսպէս Սպաննեցինք, կամ Գիրք մատուցման և հատուցման, Պէյրութ, 1954: **Թորլաքեան Միսաք**, Օրերուս հետ, Բ հրատար. Պէյրութ, 1963, 576 էջ:

Պատճառն այն է, որ Ջենալի ահաբեկումը կազմակերպել էր ՀՅԴ Վրաստանի կենտրոնական կոմիտեն: Ահաբեկման պատասխանատուն էր ՀՅԴ անդամ, խտորջուրցի Ստեփան Ծաղիկեանը, որը ծրագրի իրագործման համար նկատի էր ունեցել իր հայրենակից, անվրէպ կրակող, նոյնպէս դաշնակցական Պետրոս Տէր-Պողոսեանին և վերջինիս խորհրդով՝ խտորջուրցի երիտասարդ Արտաշէս Գէորգեանին: ՀՅԴ Վրաստանի կենտր. կոմիտէի երկու անդամները՝ Կորին Ղազազեանը և Տիգրան Աւետիսեանը, մօտից հետևում էին աշխատանքների ընթացքին՝ Ջենալին ճանաչող անձանց ներգրամամբ կազմակերպելով առերեսումներ և հետախոյզների մի ամբողջ ցանցի միջոցով հետևելով նրա տեղաշարժերին ու հանդիպումներին:

Այդ ամէնն իրականացուել է խստագոյն գաղտնապահութեամբ, երիտթուրք պարագլուխներին հովանաւորող խորհրդային իշխանութիւնների մօտ կանկաճներ ջարուցելու նպատակով: Կան որոշ տուեալներ, որոնք յուշում են, որ նախքան Ջենալի Թիֆլիսում յայտնուելը ՀՅԴ անդամներն այդ պատերազմական յանցագործին հետապնդել են Օդեսայում ու Մոսկուայում և նրան հետևելով՝ հասել մինչև Թիֆլիս⁴:

Դա է պատճառը, որ եթէ հետագայում միւս դաշնակցական վրիժառուները կարողացան անձնական յուշերի միջոցով անդրադառնալ իրենց հերոսական գործողութեանց մանրամասներին, ապա նոյնը կարելի չէրաւ Ջենալին պատուհասած վրիժառուներին: Որովհետև նրանք յանդգնութիւնն ունեցան խորհրդային դաժան պայմաններում, չեկայի քթի տակ, գնդակահարելու Ջենալին: Դրանից յետոյ երկար տարիներ թաքնուելով չեկայի տեսադաշտից՝ իրենք ևս ի վերջոյ ճաշակեցին բանտերի և քարտավայրերի արհաւիրքները: Ուստի մինչ օրս անյայտ են մնում անգամ նրանցից ոմանց մահուան պարագաները⁵:

Իրական հերոսների հասկանալի լռութիւնն առիթ հանդիսացաւ, որ հետագայում ինչ-որ պատեհապաշտ անձինք, որոնք տեղեակ էին այդ ողջ հերոսապատումի առանձին դրուագներին, իրենք իրենց ներկայացնեն որպէս Ջենալին սպանողներ⁶: Նրանցից Արտաշէս Գէորգեանի կրտսեր եղբայրը՝ Թորգոմ Գէորգեանը, Ազվին ծածկանունով անգամ յօդուածաշարք հրատարակեց Բէյրութում լոյս տեսնող «Նայիրի» շաբաթաթերթում⁷: Այստեղ քաղաքական որոշակի հաշուարկով կեղծելով իրականութիւնը՝ ահաբեկման մտադրացումը և իրագործումը վերագրուել է խտորջուրցիների ինչ-որ 13 հոգուց բաղկացած մի խորհրդի⁸:

Մինչդէռ ներկայացուած փաստաթղթերը անվիճելիօրէն հաստատում են, որ Ջենալի ահաբեկումը նախաձեռնել և իրագործել է ՀՅԴ Վրաստանի կենտրոնական կոմիտէն՝ դաշնակցականներ Ստեփան Ծաղիկեանի, Պետրոս Տէր-Պողոսեանի և նրանց համերկրացի, անկուսակցական Արտաշէս Գէոր-

4 Տե՛ս **Գրիգորյան Մարտ**, Դարձյալ Ջենալ փաշայի սպանութեան մասին, «Ազգ» օրաթ., Եր., Ն 150, 27 օգոստ. 2011, էջ 4: **Ազվազյան Միքայել**, Ովքեր են սպանել Ջենալ փաշային, Եր., 2016, էջ 60:

5 Խօսքը վերաբերում է Ստեփան Ծաղիկեանին և Պետրոս Տէր-Պողոսեանին:

6 Տե՛ս **Ազվազյան Միքայել**, Ովքեր են սպանել Ջենալ փաշային, Եր., 2016, էջ 20:

7 Տե՛ս «Նայիրի» շաբաթաթերթ, խմբագիր՝ Անդրանիկ Ծառուկեան, 2 յունուարի 1966, էջ 8:

8 Թորգոմ Գէորգեանի (Ազվին) «Նայիրի» շաբաթաթերթում տպագրուած յօդուածը, որոշ կրճատումներով, որպէս առանձին գրքոյկ՝ «Ջենալ փաշայի սպանութիւնը» լոյս է տեսել Երևանում, 1991 թուականին: Այստեղ նաև չի բացայայտուել Թորգոմի ինքնութիւնը և պահուել է Ազվին կեղծանունը, իսկ կեղծիքը՝ շարունակուել է:

գեանի միջոցով:

Ներկայացրած փաստաթղթերից միայն մեկն է վերաբերում այդ գործողութեան անմիջական իրականացնողին՝ Ջենալ փաշային անձամբ գնդակահարած Պետրոս Տէր-Պօղոսեանին, իսկ միւսները՝ նրա երիտասարդ գործընկերոջը՝ Արտաշէս Գալուստի Գէորգեանին:

Դեռևս իր 1928 թուականի ապրիլի 11-ի հարցաքննութեան ընթացքում Արտաշէս Գէորգեանը կտրականապէս հերքել է իր մասնակցութիւնը Ջենալ փաշայի սպանութեան գործում (ՀԱԱ, ֆ. 1191, ց.8, գ.115, թթ. 24-27): Բայց կանխատեսելով իր մօտալուտ կալանաւորման վտանգը՝ նոյն թուականի 24 ապրիլի գրութեամբ ուղղուած ՀՄԽՀ Չեկայի նախագահ Ս. Մելիք Յովսէփեանին Արտաշէսը խնդրել է, որ իրեն չձերբակալեն Ախտայի շրջանում հիմնուած Խոտորջուրի կոմունայի վայրից. «Եթէ ինձ ձերբակալած կոմունայից տանեն, կոմունայի պրեստիժը շրջանի գիւղացիների առաջ շատ կընկնի», այլ տեղեկացնեն իրեն ներկայանալու առ որ անկ է: Ապա իր ինքնակենսագրականում նա անդրադառնում է նաև իր «յանցանք»-ին:

Արտաշէս Գէորգեանն առաջին անգամ կալանաւորուել է 1928 թուականի յուլիսի 14-ին: Հարցաքննութիւնն ընթացել է Խոտորջուրի կոմունայի գործերով, որի հետևանքով նա դատապարտուել է երեք տարուայ բանտարկութեան:

Երկրորդ անգամ Արտաշէսը ձերբակալուել է 1936 թուականի դեկտեմբերի 23-ին և գնդակահարուել՝ 1937 թուականի օգոստոսի 14-ի լոյս 15-ի գիշերը ժամը 2-ին:

1956 թուականի հոկտեմբերին չեղեալ է համարուել Եռեակի 1937 թ. օգոստոսի 13-ի որոշումը, և Արտաշէս Գէորգեանի վերաբերեալ գործը կարճուել է յանցակազմի բացակայութեան պատճառով:

Այսպիսով, մեր կողմից յայտնաբերուած փաստաթղթերը վկայում են, որ մինչև 1928 թուականը Ջենալ փաշայի ահաբեկիչներն իրենց կատարած արարքի համար չեն ձերբակալուել և հարցաքննութեան չեն ենթարկուել: Դա ապացուցում է, որ ահաբեկման գործը կազմակերպուել է բացառիկ հնտութեամբ և գաղտնիութեան ամենախիստ պայմաններում:

Մէկ այլ կարևոր հանգամանք ևս: Թէև 1950 թուականին Սիմոն Վրացեանը հստակօրէն նշել էր Ջենալ փաշայի սպանութեան ճիշտ թուականը՝ 1922 թ. յուլիսի 21⁹, բայց անյայտ պատճառներով հետագայում հանրագիտարանային հրատարակութեանց մէջ և համացանցում լայն տարածում է գտել յուլիսի 25-ը¹⁰: Ումի՞ց կարող էր իմանալ մեր օրերում արխիւային վաւերագրերով հաստատուող այս թուականը¹¹ արտասահմանում գտնուող Սիմոն Վրացեանը, եթէ ոչ իր հաւատարիմ ընկերոջից՝ Ջենալ փաշայի սպանութիւնից յետոյ սկիզբ առած դաշնակցականների զանգուածային ձերբակալութիւնների մթնոլորտում՝ հէնց այդ գործի առիթով, Թիֆլիս ժամանած ու թերևս ապագայ պատմութեան համար ՀՅԴ Վրաստանի կենտրոնական կոմիտէի անդամների հետ լուսանկարուած Դրոյից...

9 Տե՛ս «Յուշապատում ՀՅ Դաշնակցութեան», Բոստոն, 1950, էջ 561:

10 Տե՛ս «Հայկական հարց Հանրագիտարան», Եր., 1996, էջ 355 և 382: «Հայկական համառոտ հանրագիտարան», Գ հատոր, Եր., 1999, էջ 863:

11 Տե՛ս Ս. Վրացեան, Կենսքի ուղիներով, Դ հատոր, Պէյրոս, 1965, էջ 206:

Ստորև հրատարակուող փաստաթղթերը պահպանում են Հայաստանի ազգային արխիվի թիւ 1191 ֆոնդում: Բոլոր փաստաթղթերը հրապարակում են բնագրային հաւատարմութեամբ, ժամանակագրական հերթականութեամբ, գլխատառ-մեծատառով անուանումների տեքստային պահպանմամբ. ուղղանկյին փակագծերում տրուել են խմբագրական յաւելումներ:

Փաստաթղթերը հայերէն թարգմանութեամբ հրապարակում են առաջին անգամ: Մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում այդ աշխատանքներում մեզ աջակցած՝ պատմաբան Աւագ Ա. Յարութիւնեանին:

Աղասի Պ. Ազիզեան



Հ.Յ.Տ. վրաստանի Կենտր. Կոմիտէի անդամները Դրոյի հետ, 1923 թ., Թիֆլիս: Զախից աջ՝ Մինաս Մակարեան, Կորիւն Ղազազեան, Տիգրան Աւետիսեան, Դրօ, Վահատ Խուդադեան*:

ԱՐՄԻՎ

Թ. (ԺԵ) քարի, թիվ 3 (59), հայխ-սեպտեմբեր, 2017

ՎԿՎ համահայկական հանդես

* «Յուշամատեն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ալբոմ-ատլաս»-ի Բ. հատորի (Լուս Անճելըս, Քալիֆորնիա, 2001) 217-րդ էջում, տպագրուած այս լուսանկարի թուականը նշուած է 1920, որը ձիշտ չէ:

Summary

ARCHIVAL DOCUMENTS ON THE ASSASSINATION OF DJEMAL PASHA

Aghasi P. Azizian

Key words – «Nemesis», Djemal Pasha, ARF Dashnaksutyun, Stepan Tsaghikyan, Petros Ter-Poghosyan, Artashes Gevorgyan, ARFD Central Committee in Georgia, avengers, arrests.

In the fall of 1919 in the capital of independent Armenia – Yerevan, the 9th General Assembly of the ARF Dashnaksutyun adopted a historic and daring decision to punish the Young Turks responsible for the Armenian Genocide and Musavatists who continued their policy in the Eastern Transcaucasus. This operation went down in history under the name «Nemesis».

On July 21, 1922, the Central Committee of the ARF Dashnaksutyun of Georgia organized the terror of Djemal Pasha. Member of the ARF Dashnaksutyun Party – Stepan Tsaghikyan from Khotorjur (Sirakonak) was the chief responsible for the implementation of the operation. On his initiative, his compatriot, as well as a member of the ARF Dashnaksutyun party, excellent marksman Petros Ter-Poghosyan and Artashes Gevorgyan joined the operation. Two members of the committee of the Georgian ARF Dashnaksutyun center – Koryun Ghazazyan and Tigran Avetisyan, were monitored the work, organized meetings with people who knew Djemal and followed his movements and meetings through a whole network of intelligence officers.

The understandable silence of real heroes in the future served as an occasion for opportunists who were aware of some episodes of this heroic operation, to declare themselves assassins of Djemal. The presented documents undoubtedly confirm that the terror against Jemal was initiated and implemented by the Georgian Central Committee of the ARF Dashnaksutyun – Dashnaks Stepan Tsaghikyan, Petros Ter-Poghosyan and their compatriot, nonpartisan Artashes Gevorgyan.

АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ ОБ УБИЙСТВЕ ДЖЕМАЛЯ ПАШИ

Агаси П.Азизян

Ключевые слова – «Немезида», Джемал-паша, АРФ Дашнакцутюн, Степан Цагикян, Петрос Тер-Погосян, Арташес Георгян, Центральный комитет АРФД Грузии, мстители, аресты.

Осенью 1919 года в столице независимой Армении – Ереване, 9-е Общее собрание АРФ Дашнакцутюн приняла историческое и дерзкое решение наказать младотурков ответственных за Геноцид армян и мусаватистов, которые продолжили их политику в Восточном Закавказье. Эта операция вошла в историю под именем «Немезиды» («Немесис»).

21 июля 1922 года Центральным комитетом АРФ Дашнакцутюн Грузии был организован террор Джемаля паша. Член партии АРФ Дашнакцутюн – Степан Цагикян из Хоторджура был ответственным за реализацию операции. По его инициативе в дело включились его соотечественник, также член АРФ Дашнакцутюн, отменный стрелок Петрос Тер-Погосян и Арташес Геворкян. Два члена грузинского ЦК АРФ Дашнакцутюн – Корюн Газазян и Тигран Аветисян, руководили этой работой, организовывали встречи с людьми знавшими Джемалю и следили за его передвижениями и встречами через целую сеть агентов.

Понятное молчание настоящих героев в будущем стало поводом для авантюристов, которые были в курсе некоторых эпизодов этой героической операции, объявлять себя убийцами Джемалю. Представленные документы несомненно подтверждают, что террор против Джемалю инициировал и реализовал ЦК АРФ Дашнакцутюн Грузии, а его непосредственно осуществили члены АРФД Степан Цагикян, Петрос Тер-Погосян и их соотечественник, беспартийный Арташес Геворкян.

* * *

ԹԻՒ 1

Ընկ. Մելիք Հովսեփյան!¹²

Ձեզ՝ որպես ավագ ընկերոջ, և որպես Հոկտեմբերյան մեծ հեղափոխության նվաճումները հակահեղափոխականների ոտնձգություններից պաշտպանող կազմակերպությունը գլխավորող ընկերոջ, դիմում եմ ես այս նամակով:

Տատանվում էի գրել այս նամակը, բայց չկարողացա չգրել: Ես չեմ վախենում ոչ մի պատժից, եթե մեր իշխանության դեմ ես հանցանք եմ գործել, ես գիտակցաբար պատրաստ եմ արժանի պատիժը կրելու, բայց գրկվել խոտորչության կոմունայում աշխատելու հնարավորությունից, ինձ համար շատ դժվար և ծանր էր:

12 Նամակը սկսում է հեկնց այսպես: Նշուած չէ Մելիք-Յովսէփեանի հանգամանքը: Խօսքը ՀՄԽՀ Չեկայի և ապա Պետրաղվարչութեան նախագահ Սերգէյ Մելիք-Յովսէփեանի (Օսիպովի) մասին է:

Թ. (ԺԵ) րաարի, թիվ 3 (59), հայիւ-սեպրեմբեր, 2017

ՎԷՎ համահայկական հանդես

Այդ կոմունան հիմնելու համար ես շատ աշխատել եմ և այս 3 տարիների ընթացքում անլուր գրկանքների մեջ կոմունան հասցրել եմ Անդրկովկասի մեջ առաջնության պատվին, մանավանդ այժմ 100 անապաստան երեխաների ընդունելության հաջողությունը իմ այնտեղ աշխատելուց էր կախված, բայց ես չէի, ույժ չունէի Իլլիչի կուսակցությանը խաբելու: Եւ գրեցի:

Ընկ. Մ. Հովսեփյան, միմիայն մի խնդիրք ունեմ Ձեզնից և հավատացած եմ, որ չէք մերժի: Երբ ես Ձեզ հարկավոր լինեմ, իմ հետևից մարդ մի դրկեք, այլ հեռագրով, պոստով կամ այլ միջոցով լուր տվեք ես անմիջապես կը ներկայանամ, ես երբեք փախչելու նպատակ չունեմ, եթէ փախչելու նպատակ ունենայի, այդ անելու ես հնարավորություններ ունէի. մոտս կար 7000 ռուբլի դրամ, կոմունայի կնիքը և այլն: Ես կարող էի մինչև այժմ փախած լինել, բայց ես գիտակցաբար ինձ ամբողջովին դնում եմ մեր կուսակցության և դասակարգի խղճի առաջ և դժգոհ չեմ լինի նրա վճռից: Եթէ ինձ ձերբակալած կոմունայից տանեն, կոմունայի պրեստիժը շրջանի գյուղացիների առաջ շատ կլընկնի, չեմ ուզում որ իմ պատճառով կոմունան որևէ վնաս կրի:

Գուցե Ձեզ հետաքրքիր լինի թէ ինչո՞ւ մինչև այժմ չեմ հայտնել դրա մասին:

Այդ օրերից բավականին հետո երբ ես արդեն քաղաքականապես բավական զարգացել էի և գիտակցում էի իմ սխալը, շատ անգամ մտածել եմ, թէ գնամ հայտնեմ ճշմարտությունը, բայց ասում էի ինչ օգուտ դրանից խորհրդային իշխանության. Տաճկաստանի հետ կոնֆլիկտը արդեն հարթվել էր. մեկ էլ այդ խնդիրը հրապարակ հանել և կրքերը բորբոքել, իմ հասկացողությամբ ոչ մի օգուտ չուներ, հենց դրա համար էլ լռել էի մինչև այժմ, բայց քանի որ այժմ այդ դեպքի բացատրությունը կարող է պարզել նաև դաշնակների գործունեության որոշ էջերը պետք էր ճշմարտությունը երևան հանել:

Ստորագրություն

24/IV1928

Երևան

Ն.Ախտա Խոտորջուրյան կոմունա

ՀԱԱ, Ֆ. 1191, ց. 8, գ. 115, թ. 12: Ձեռագիր, հայերէն

ԹԻԻ 2

ԻՄ ՀԱՄԱՌՈՍ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՐ ԿԸ ԳՏՆԵՐ ԵՒ ԻՄ ՀԱՆՑԱՆՔԸ

Ես ծնվել եմ 1894 թվին Խոտորջուրի Միջինթաղ գյուղում: Սակավահողության պատճառով իմ հայրը ստիպված էր պանդխտությամբ ընտանիք պահել: Նա 4-5 տարին անցկացնում էր պանդխտության մեջ, վերադառնում էր գյուղ, մի տարի մնում ընտանիքի մոտ և կրկին վերադառնում պանդխտություն և երկար ժամանակ որպես բանվոր, խմոր հնձող, հաց թխող և գործակատար աշխատել է Թիֆլիս, Նիկոլայեվ և Դոնբաս մասնավոր փոնչիների մոտ և այդպիսով պահել ընտանիքը: 13 տարեկան հասակից ես էլ ստիպված էի թողնել հայրենի գյուղը և դիմել պանդխտության. ոտքով, ճանապարհի պաշարը շալակած, դուրս եկա գյուղից ուրիշ ինձ նման պանդխտության դիմող խոտորջուրցիների հետ և գաղտնի (որովհետև սուլթանական կառավարությունը այն ժամանակ արգելում էր հայերին արտասահման մեկնելը)

գյուղից դուրս եկանք և վեց օրվա տանջալից ճանապարհորդությունից հետո հասանք Բաթում, այնտեղից ես մեկնեցի Դոնբաս հորս մոտ, որը այդ ժամանակ աշխատում էր Մաքսիմովսկի բուտնիկում[հանքավայր] Մաշուրյանների փռում: Հորս մոտ մնացի մոտ 3 ամիս և երբ մի քիչ ռուսերեն լեզվի հետ ծանոթացա, մտա Գոլոբովսկի բուտնիկի փռում ամիսը 15 ռուբլիով աշխատելու. երկու և կես տարի այդտեղ մնացի, ֆիզիքական սոսկալի և ծանր աշխատանքի տակ գրիժա հիվանդությունն ստացա, որի պատճառով հայրս ինձ տվավ դերձակի մոտ որպես թեթև արհեստ սովորելու: Կես տարի դերձակի մոտ աշակերտելուց հետո նույն տեղ սկսեց խոլերա հիվանդությունը և ես մեկնեցի Խոտորջուր: Նույնպես սովորեցի ձի նալելու արհեստը: Այդպես երբեմն ձի նալելով, երբեմն դերձակությամբ, երբեմն էլ փռնչությամբ ապրեցի մինչև 1917 թ.: Մինչ այդ պատերազմի սկզբին մեր ընտանիքի մի մասը արդեն տեղափոխվել էր Տաճկաստանից մեզ մոտ Դոնբաս: Կամավորական շարժումներին հակառակ եմ եղել և չեմ մասնակցել:

1918 թ. ընկ. Լենինի Տաճկահայաստանի մասին եղած դեկրետից հետո գնացի Խոտորջուր, բայց Էրզրում հասնելուց մի քանի օր հետո Էրզրումը ընկավ և մենք հետ եկանք Ալեքսպոլ: Ալեքսպոլում մեզի մոբիլիզացիայի ենթարկեցին: Մենք Սուրատի խմբումն էինք: Այդ խմբի մեջ էր նաև Ծաղիկյան Ստեփանը (հենց նրա մոտ էլ մենք). այդ խումբը շուտով քայքայվեց մեծ մասամբ հրամանատարներն էլ գնացին Թիֆլիս: Գրավվեց և Ալեքսպոլը, մենք նահանջեցինք Ղարաբիլիսա: Հետո միացանք Անդրանիկին և մինչև 1919 թիվը գարնանը մնացինք նրա մոտ որպես շարքային ձիավոր: Զանգեզուրում երբ դաշնակցականները սպանում էին ընկ.ընկ. Բակունցին¹³ և Արմենակ Ղարազյոզյանին, ես օժանդակել եմ նրանց ազատվելուն: 1919 թվի գարնանը ուզում էինք անցնել Դոնբաս, բայց Բաթումում քաղցած մնալով ստիպված էինք զինվոր գրվել: Ստեփան Ծաղիկյանը մեծ ժողովրդականություն էր վայելում այն ժամանակ խոտորջուրցիների մեջ և ես էլ նրա մոտ մտա ծառայելու: Նա IV բրիգադայի ձիավոր խուզարկու հարյուրյակի հարյուրապետ էր, բայց Սեպուհի վրա մեծ ազդեցություն ուներ: Ղարսում մի ժամանակ ծառայեցի, բայց այնքան անարդարություններ տեսա, թե Ծաղիկյանի և թե ընդհանրապես պետության կողմից, որ զգված հեռացա խորհրդային Ռուսաստան, Դոնբաս: 1919 թվի դեկտեմբերից մինչև 1922 թիվ մարտ ամիսը Դոնբասում ծառայել եմ պետական զանազան հիմնարկներում, իսկ մեր ընտանիքի մի մասը հող էր ստացել և հողագործությամբ էր պարապում: 1921 թվի սոսկալի սովից հետո որոշեցինք ընտանիքով փոխադրվել Հայաստան նոր կոլեկտիվ հիմունքներով գյուղ հիմնելու:

1921 թվին եղբայրս Թորգոմն էլ Կովկասից վերադարձավ Դոնբաս, պատմեց Սեպուհի, Ծաղիկյանի և ընդհ. Դաշնակցության, հեղափոխության և հայ ժողովրդի հանդեպ կատարած սև դերի մասին: Թորգոմի հետ ման եկանք Ուկրայնայի շատ տեղեր, նոր գյուղի մասին խորհրդակցություններ արինք, շատերը ցանկություն հայտնեցին գյուղ գալու:

Վերջապես 1922 թվի գարնանը մեր ընտանիքը փոխադրվում էր Հայաստան, բայց Թիֆլիսում հայրիկս ծանր հիվանդացավ, որի պատճառով ընտանիքը Թիֆլիս մնաց, իսկ ես եկա Երևան հող ստանալու: Ընկ. Հովակիմյան Հայկի միջնորդությամբ համարյա թե հողը ստացանք: Լուր տվի Ռուսաստան, որ փող ուղարկեն մեր հայրենակիցները պրակտիկ աշխատանքի անցնելու համար, բայց չստանալով վերադարձա Թիֆլիս: Հենց Թիֆլիս հասած օրս փողոցում պատահեցի Պետրոս Քիթապզուզին¹⁴, որին ծանոթացել էի 1919 թվի գարնանը Բաթումում և միասին ծառայում էինք IV բրիգադայում: Պետրոսը ինձ առաջարկեց Ջենավին սպանելու գործում մասնակցել: Նա ինձ պատմեց, որ Ջենավ փաշան ընդհանուր հրամանատար է եղել և Տերզորի սարսափելի ջարդերն է կազմակերպել և այլն: Երկար ու բարակ նկարագրեց մեկ առ

13 Երեմիա Բակունց:

14 Բառն այսպես է գրուած: Խօսքը վերաբերում է Պետրոս Տէր-Պօղոսեանին, ով ճանաչուած էր Քիթապզուզ մականունով:

մեկ նրա գազանությունները, որոնց մասին ես լսել էի առաջուց մեր գյուղացի իմ ազգական Կառլոս Չախալյանից, որը Տաճկաստանի կոտորածների ժամանակ այնտեղ էր և հրաշքով ազատվել էր կոտորածներից: Նա երկար ապրել էր Սուրիայում, որտեղ Ջենալ փաշան եղել էր ընդհանուր հրամանատար: Ես այն ժամանակ չգիտեի, թե նա պատվիրակ է և այլն: Պետրոսից հարցրի, թե նա ինչ ունի Թիֆլիսում. նա ասաց, որ էնվեր փաշան էլ Թուրքեստանն է: Սրանք կազմակերպում են թուրքերին, համիսլամիզմ են քարոզում, թե Ջենալը էնվերի և Թալաթի հետ երրորդություն էին կազմում Տաճկաստանում և նրանք ներկայիս ուզում են Կովկասի և Թուրքեստանի թուրքերին ոտքի հանել և գրավել Կովկասը և այլն: Եւ ես առանց գիտնալու թե գործ ունեմ բարեկամ պետության պատվիրակի հետ (ինչպես վերջը հայտնվեց), այլ մի արյունաբեր գեներալի որպես դահիճի, մասսայական կոտորածներ սարքողի, որպես 800 երեխաներ ողջ-ողջ վառողի և վերջապես մի մարդ-գազանի ինչպիսին կար Ջենալը իմ երևակայության մեջ ես մահվան դատապարտեցի և տվի իմ համաձայնությունը: Գլխավորը նա է, որ Պետրոսը ինձ ասում էր, թե ինքը մենակ է և չի կարող այդ գործը յուր տանել առանց իմ աջակցության, այն է անմիջապես մասնակցության:

Նա ինձ ասաց, որ զենքեր ես կը բերեմ և այս երեկո ես քեզ նրան ցույց կտամ որ լաւ ճանաչես: Ժամադրվեցինք: Երեկոյան արդեն մթնել էր մենք պատահեցինք, մաուզերները խրեցինք գոտիներս և անցանք, առաջնորդում էր Պետրոսը, անցնում էինք Դվորցովի փողոցով մտանք վրացական կլուբը, նստեցինք մի սեղանի շուրջ պահանջեցինք զակուսկաներ: Քիչ վերջ ներս մտավ Ծաղիկյան Ստեփանը երկու ինձ անծանոթ երիտասարդների հետ: Ես ցնցվեցի: Նրանք մոտեցան մեզ, Ստեփանը ինձ բարևեց և ծանոթացրեց ընկերների հետ: Նրանք ևս նստեցին մեր սեղանի շուրջ: Մեղանը բավականին ճոխացավ: Վերջապես ինձ ցույց տվին մի բավականին լայն թիկունքով, կլոր դեմքով և կլոր մորուքով սև բիտժակը [պիչակ] հագին մի տղամարդու և ասացին, որ դա Ջենալ փաշան է: Նա նստած էր մի շքեղ հագնված կնկա հետ և ընթրում էր իր ընկերների հետ: Այն երիտասարդները, որոնց հետ ինձ այդ իրիկունը ծանոթացրին Կորյունը և Տիգրանն¹⁵ էին, որոնք ինձ հետ չափազանց լավ վերաբերվեցին: Ես հասկացա, որ այս խաղը դաշնակցական խաղ է, բայց խոսք էի տվել և չէի կարող մերժել, չնայած որ հենց այդ օրից արդեն զգացի իմ սխալը: Մի քանի օր Պետրոսի հետ շարունակ երեկոները ման էինք գալիս և ես բավականին ծանոթացա Թիֆլիս քաղաքի փողոցների հետ որոնք մինչ այդ ինձ համարյա թե անծանոթ էին, ի միջի այլոց, Պետրոսն ամեն օր ճիշտ տեղեկություն ուներ թե Ջենալը որտեղ է լինելու և որ փողոցով է անցնելու: Ցերեկները ես մեր տանն էի լինում, հայրս շատ չէր սիրում, որ ես փողոցներ չափեմ և որովհետև նա հիվանդ էր ես ամբողջ օրը նրա մոտ նստում և գիրք էի կարդում: Վերջապես մի օր էլ բավականին հարմար տեղ պատահեցինք և հետապնդելուց էլ հոգնել էինք ու որոշեցինք կատարել այն ինչին որ հետապնդում էինք ու մի ակնթարթում մեր ատրճանակները դատարկվեց: Նրանք ընկան ու մենք մտանք մութ փողոցներ: Լավ չեմ հիշում, թե որտեղ ես զենքս հանձնեցի Պետրոսին և ուղիղ գնացի տուն Пушкинская No 11 և մտա անկողին: Մյուս օրը Պետրոսը եկավ ինձ մոտ և ասաց, որ մենք այս գիշեր քեֆ ենք արել, բայց չգիտեմ թե այդ քեֆին ո՞վ է մասնակցել և որտեղ է եղել: Այդ քանի մը օրվա մեջ ես ծանոթացա Կորյունի, Տիգրանի և նրա կնոջ, ինչ-որ շաշաչքերով Աշոտի¹⁶ հետ, որոնք այդ ժամանակ ղեկավարում էին Դաշնակցությունը: Ես մնացի Թիֆլիսում և հետևում էի թե դրանցից ո՞վ է բռնվում: Այն տարին, բացի Ստեփանից և Պետրոսից բոլորն էլ բռնվեցին: Մինչ այդ և այդ դեպքից հետո էլ ուրիշ ոչ մի առնչություն չեմ ունեցել դաշնակների հետ: Դրանից հետո մինչև 1923 թվի մարտի 17 եղել եմ Թիֆլիսում և աշխատել եմ Գոգոլիվսկի փող. No 41 փռում: Այդ ժամանակվա ընթացքում ամուսնացա և մարտի 17-ին մեկնեցի Ռուսաստան: Դոնբաս ց. Вальварололе մի հայի Նշան Կարապետովի խանութում ծառայել եմ

15 Կորին Ղազազեան և Տիգրան Ալեոխեան՝ ՀՅԴ Վրաստանի Կենտր. Կոմիտեի անդամներ:
16 Հաւանաբար Աշոտ Իսրայէլեան: ՀՅԴ Վրաստանի Կենտր. Կոմիտեի անդամ:

որպես գործակատար և 1924 թվի փետրվարին նորից եկա Երևան կոմունա կազմակերպելու, միաժամանակ զբաղվելով կոմունայի կազմակերպման շուրջ, ծառայում էի Երբբանկոտայում, 1924 թվի վերջերը գրեցի Ռուսաստան ընկերներիս, որ գան:

Վերջինները 1925 թվի սկզբից եկան և սկսեցինք կոմունայի կազմակերպությունը և 1925 թվի ապրիլի 10-ին կազմակերպչական աշխատանքները վերջացուցինք ու մայիսի 10-ին հիմնվեցանք տեղում: Մայիսի 19-ին պետությունը պաշտոնապես Ղորոլխգյունեյ¹⁷ գյուղի հողամասը հանձնեց կոմունային և կոմունան այդ օրը տոնում է իր տարեդարձը, որը այս տարի տոնում ենք III տարեդարձը:

Թէ ինչ քաղաքական և հասարակական աշխատանք եմ տարել կոմունայում, դրա մասին այստեղ գրելը ավելորդ եմ համարում և մեկ առ մեկ թվելն անհնարին է: Միայն այն կասեմ, որ հսկայական սոցիալիստական շինարարություն է կատարվել, որի մասին կը վկայեն մեր շրջանի ու կենտրոնի հասարակական, կուսակցական և պետական օրգանների ներկայացուցիչները, միայն թէ թող անաչառ լինեն: Մեր Շրջանի Աշխատավոր գյուղացիությունից, պետական-կուսակցական և հասարակական կազմակերպություններից կարող էք իմ մասին կարծիք հավաքել:

Ստորագրություն



24/IV28
Երևան
Հասցես

Ն. Ախտայի շրջան խտտորջուրյան կոմունա

ՀԱԱ, Ֆ. 1191, ց. 8, գ. 115, թ. 13-18: Ձեռագիր, հայերէն:
Գրուած է A5 չափի թղթի երկու երեսին ընդհանուր՝ 11 էջ:

**ԹԻՒ 3
ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ**

1928 թ. մարտի 6, Թիֆլիս, գաղտնի բաժին

Ես՝ ներքոստորագրեալս, հարցաքննուել եմ որպէս մեղադրեալ և ցուցմունք եմ տալիս.

1. Ազգանուն – Տէր-Պօղոսեան, նոյն ինքը՝ Քեշիշեան,
2. Անուն, հայրանուն – Պետրոս Յովհաննէսի,
3. Տարիքը – 35 տարեկան,
4. Քաղաքացիութիւնը – ՀՄԽՀ քաղաքացի,
5. Ծագումը – Էրզրումի վիլայէթի Սոխրկուտ գիւղի գիւղացի,
6. Բնակութեան վայրը – մինչև ձերբակալութիւնը բնակուել եմ Կուբանում¹⁸, Ռազդոյլէ կայարան և Կրասնոդարում,
7. Զբաղմունքը կամ ծառայութեան վայրը – ծառայող, վերջին ժամանակներս՝ գործագուրկ,
8. Ընտանեկան դրութիւնը – ամուրի,
9. Գոյքային դրութիւնը – սեփականութիւն չկայ,
10. Կուսակցականութիւն – «Դաշնակցութիւն» կուսակցութեան նախկին անդամ

¹⁷ Հետագայում Կարմիր հովիտ՝ Հրազդանի շրջանում:
¹⁸ Երկրամաս Ռուսաստանում:

1908 թ.–ից մինչև 1909 թ., այժմ՝ անկուսակցական,

11. Կրթությունը – ընդհանուր՝ նախնական, մասնագիտական՝ չկայ,

12. Ինչո՞վ է զբաղուել ու որտե՞ղ է ծառայել – Խարկովում և Կադիկայում կապալառու ընդհուպ մինչև 1917 թ.,

ա) մինչև 1914 թ. պատերազմը – ,

բ) մինչև 1917 թ. փետրուարեան յեղափոխությունը – փետրուարեան յեղափոխությունը դիմաւորեցի Թուրքիա գնալու ճանապարհին,

գ) մինչև հոկտեմբերեան յեղափոխությունը¹⁹ – Թուրքիայում,

դ) մինչև ԱՄՖՍՀ-ում²⁰ Խորհրդային կարգերի հաստատումը²¹ – եղել եմ Թիֆլիսում, ծառայել և առևտուր եմ արել տարբեր ժամանակ,

ե) ԱՄՖՍՀ-ում Սովետական կարգերի հաստատումից յետոյ մինչև ձերբակալութեան օրը – 1922 թ. զբաղուել եմ նոյն գործով, յետոյ մեկնել եմ Ռուսաստան, որտեղ ապրել եմ Դոնբասում,

13. Տեղեկություններ նախկին դատուածութեան մասին – չկայ:

ԸՍՏ ԳՈՐԾԻ ԷՈՒԹԵԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

1919 թ. Թուրքիայից գալուց յետոյ ես հաստատուեցի Բաթումում, որտեղ ապրեցի մինչև նոյն տարուայ ամառը, ապա մեկնեցի Հայաստան: Հայաստանում մտայ զինուորական ծառայութեան՝ Հայկական 4-րդ բրիգադում: Որպէս շարքային զինուորական ծառայութեան մէջ եմ եղել մինչև Հայաստանի խորհրդայնացումը: Կարմիրների դէմ կռիւներին²² չեմ մասնակցել, քանի որ Դիլիջանում տեղակայուած մեր բրիգադը կարմիրներին ոչ մի դիմադրութիւն չի ցուցաբերել: Հայաստանի խորհրդայնացումից յետոյ ես դեռ մինչև փետրուարեան աւանտիւրան²³ մեկնել էի Վրաստան և այնտեղից՝ Բաթում: Դա 1921 թ. էր: Ողջ 1921 թ. ես մշտապէս բնակուել եմ Բաթումում, զբաղուել առևտրով և յաճախ էի մեկնում Թիֆլիս: 1922 թ. ես գնացի Թիֆլիս: Իսկ Բաթումում 1921 թ. ապրում էր Ձեզ յայտնի Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԸ:

Թիֆլիս հասնելով՝ ես կանգ առայ Պաստերովեան փ. Ո. 8-ում: Այդ տանը ապրում էր իմ համերկրացին, երբ նա մեկնեց, մենք զբաղեցրեցինք այդ բնակարանը:

Դաշնակցութեան կուսակցութեան տեղական գործիչների հետ ես ծանօթ չէի, երբ Բաթումից եկաւ Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԸ, ես նրա միջոցով ծանօթացայ Կորին ՂԱԶԱԶԵԱՆԻ ու Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԻ հետ: Նրանք՝ ՂԱԶԱԶԵԱՆԸ, ԱԻԵՏԻՍԵԱՆԸ և ԾԱՂԻԿԵԱՆԸ, արդեօք որևէ կուսակցական աշխատանք կատարում էին, թէ ոչ՝ ես չեմ կարող ասել, քանի որ դա ինձ յայտնի չէ: Քանի որ նրանք Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԻՆ բաւական մօտիկից էին ճանաչում որպէս դաշնակի, ինձ էլ էին համարում իրենցից: Չնայած դրան, ես կտրականապէս յայտարարում եմ, որ այդ ժամանակ անձամբ ես ոչ մի կուսակցական աշխատանք չեմ կատարել:

Անդրադառնալով 1922 թ. յուլիսի 21-ին Թուրքիայի նախկին ռազմական նախարար Ահմեդ Ջեմալ Փաշայի սպանութեանը, ասեմ հետևեալը.

1922 թուականի յուլիսին ես թուրքական բանակի նախկին սպայ ոմն Արշակից՝ ազգանունը չեմ յիշում, ում գիտէի հայկական գօրամասերում ծառայութեան ժամանակից (Արշակը ինչ-որ ձևով յայտնուել էր Հայաստանում, կարծեմ՝ որպէս ռազմագերի, և ծառայել էր դաշնակցական բանակում), իմացայ, որ Թիֆլիս է ժամանել ու «Օրինտ» հիւրանոցում է տեղադրուել նախկին ռազմական նախարար Ահմեդ Ջեմալ Փաշան: Իմանալով այդ մասին՝ ես ոչ մէկին ոչինչ չասացի և ցոյց չտուեցի, որ դա ինձ հետաքրքրում է, և հէնց նոյն օրը, զինուելով «Մաուզեր»-ով, ես սկսեցի հետևել «Օրինտ»-ին, որպէսզի հսկողութեան տակ վերցնեմ Ջեմալին:

19 Նկատի ունի 1917 թուականի Հոկտեմբերեան յեղաշրջումը:

20 Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիւ Սոցիալիստական Հանրապետութիւն:

21 1921 թուականին:

22 Նկատի ունի 1920 թ. նոյեմբերի վերջը – դեկտեմբերի սկզբը:

23 Նկատի ունի 1921 թ. Փետրուարեան ապստամբությունը:

Ես Ջենալին սկարով գիտեի, այնպես որ ինձ համար դժուար չէր նրան ճանաչելը: Այդ օրը ես նրան հսկողութեան տակ վերցնել չկարողացայ:

Պէտք է ասեմ, որ հէնց իմացայ, որ Ջենալին այստեղ է, ինձ մօտ անմիջապէս միտք ծագեց նրան սպանել: Այդ պատճառով հէնց այդ օրը ես սկսեցի ընկերներ փնտրել այդ ակտն իրականացնելու համար: Առաջին անգամ ես դիմեցի Վաղարշակ անունով ընկերոջս (ծագումով մեր շրջանից, թրքահայ): Վաղարշակը մերժեց, և դրա համար ես նրան գործի մանրամասները չասացի: Երբ ես բանակցում էի Վաղարշակի հետ, դեռ ինձ չէր յաջողուել հսկողութեան տակ վերցնել Ջենալին: Այդ դէպքից մի քանի օր անց ես մտայ Վրացական ակումբ և այստեղ պատահական հանդիպեցի Ջենալին: Սակայն, չեմ յիշում ինձ հետ ընկերը կար, թէ՛ ոչ, բայց այն բանից յետոյ, երբ Վաղարշակը մերժեց, այդ ակտը համատեղ կատարելու համար ես վերցրել էի իմ համաերկրացի Արտաշէս ԳԷՈՐԳԵԱՆԻՆ, ով ցանկութիւն յայտնեց ինձ օգնել:

Այդ ժամանակ Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԸ Թիֆլիսում չէր: Երբ ես Արտաշէս Գէորգեանի հետ հսկողութեան տակ էի վերցրել Ջենալին, որպէսզի յարմար տեղում սպանէի նրան, ինձ թուում է, որ [Հ. Յ. Գ.] Վրաստանի Կ.Լենտրոնական] Կ.Լոմիտէի] անդամներից ոչ ոք այդ մասին տեղեակ չէր, քանի որ ոչ մէկին չէինք ասել: Յետոյ եկաւ ԾԱՂԻԿԵԱՆԸ ու նրան ես ամէն ինչ պատմեցի: Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԸ տուեց իր համաձայնութիւնը և ինձ առաջարկեց օգնական վերցնել Ձեզ յայտնի Աշոտ ԽԱՉՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ, ով պէտք է մասնակցեր ահաբեկչութեանը: Ես չհամաձայնուեցի նրան վերցնել, սակայն ԽԱՉՄԱՆՈՒԿԵԱՆԸ Ջենալին հսկողութեան տակ վերցրած ժամանակ գալիս էր մեզ հետ:

Ես ենթադրում եմ, որ ԾԱՂԻԿԵԱՆՆ այդ ամէնի մասին յայտնել էր ԱԻԵՏԻՍԵԱՆԻՆ ու ՂԱԶԱԶԵԱՆԻՆ: Դա երևում էր նրանից, որ մի անգամ, երբ այդ օրերին ես գրուցում էի ՂԱԶԱԶԵԱՆԻ հետ, լաւ յիշում եմ նրա բառերը. «Սպանէք միայն Ջենալին»:

Ինչ վերաբերում է Կ.Լենտրոնական] Կ.Լոմիտէի] ահաբեկչութեան թոյլտուութեանը, ապա ես այն չեմ ստացել, բայց քանի որ ՂԱԶԱԶԵԱՆԸ որպէս Կ.Լենտրոնական] Կ.Լոմիտէի] նախագահ, ասաց . «Սպանէք միայն Ջենալին», դրանով իսկ թոյլատրեց ահաբեկչութիւնը:

Այդպիսով, ես Արտաշէս ԳԷՈՐԳԵԱՆԻ հետ շարունակեցի հետևել Ջենալին: Հետևելուն օգնելու համար Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԸ մեզ կցեց այժմ մահացած Յովակիմ ՂՈՒԼԵԱՆԻՆ ու Ձեզ յայտնի Յովհաննէս ՉԱՒԱԼԵԱՆԻՆ: Պէտք է ասելացնեմ, որ այդ օրը, երբ մենք սպանեցինք Ջենալին, նրանք կորցրեցին նրան ու դրա համար մեզանից յետ մնացին: Բայց առանց դրա էլ, երկրորդ անգամ կրկնում եմ, նրանք միայն հետևելու համար էին նշանակուած:

Սպանութեան օրը, այսինքն, 1922 թ. յուլիսի 21-ին, Յովակիմ ՂՈՒԼԵԱՆՆ ու Յովհաննէս ՉԱՒԱԼԵԱՆԸ հետևելով Ջենալին ու նրա մերձաւորներին, հասցրեցին նրանց մինչև թուրքական հիւպատոսարան, որը գտնուում էր Գանովսկի փողոցի վրայ և այդ մասին յայտնեցին մեզ: Ես ԳԷՈՐԳԵԱՆԻ հետ այդ ժամանակ գտնուում էի Լերմոնտովի փողոցի վրայ: Որոշ ժամանակ անց ԳԷՈՐԳԵԱՆԸ նկատեց, որ նրանք գալիս են: Ինչպէս ես արդէն նշել եմ վերը, նրանց հետևող ՉԱՒԱԼԵԱՆՆ ու ՂՈՒԼԵԱՆԸ հիւպատոսարանից նրանց դուրս գալը չէին նկատել: Հսկողութեան տակ վերցնելով Ջենալին, նրա համհարզին ու քարտուղարին, մենք սկսեցինք հետևել նրանց ու նոյնիսկ այդ մասին յայտնեցինք մօտակայքում գտնուող Աշոտ ԽԱՉՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ:

Ջենալին ու նրա մերձաւորները հիւպատոսարանից դուրս գալով գնացին Երևանեան հրապարակ, իսկ այնտեղից՝ բարձրացան Սոլոլակեան, ապա թեքուեցին Տրոցկու փողոց (նախկին՝ Պյոտր Մեծի), նրանք քայլում էին մայթի ձախ կողմից, իսկ մենք՝ աջ: Երբ նրանք հասան Ժուկովսկու անկիւնը, որտեղ լուսաւոր էր, մենք արագ փողոցն անցանք և ես առաջինը կրակեցի Ջենալի վրայ, ինչից յետոյ, Ջենալին ընկաւ, իսկ նրա կողքից գնացողը շուտ եկաւ մեր կողմը ու հանեց նիկելապատ

«Բրաունինգ»²⁴–ը, սակայն չհասցրեց կրակել, քանի որ այդ ժամանակ նրա վրայ սկսեց կրակել Արտաշէս ԳԷՈՐԳԵԱՆԸ: Միւս մերձաւորը սկսեց գոռալ ու Սոլովակեան փողոցով վազել ներքև: Ես կրակելով վազեցի նրա յետևից: Իմ յետևից վազում էր ԳԷՈՐԳԵԱՆԸ և համոզուելով, որ սպանութիւնն իրականացուել է՝ մենք փախանք, մեր ճանապարհը փակեց մէկը, կարծեմ ես կրակեցի նրա վրայ և շարունակեցինք փախչել: Ժուկովսկու վերին մասում մեզ հանդիպեցին երկու քաղաքացի, որոնք հարցրեցին, թե ի՞նչ է պատահել: Ես պատասխանեցի, որ այնտեղ կրակում են և շարունակեցի առաջ գնալ, յիշում եմ նաև, որ այդ ժամանակ ես դիմեցի ԳԷՈՐԳԵԱՆԻՆ, որ յետ էր ընկել, ու ասացի. «Շուտ, շուտ եկ»²⁵, այսինքն՝ «արագ արի»: Ժուկովսկուց մենք իջանք Վոզնեսենսկեան փողոց և այնտեղից բաժանուեցինք: Սպանութիւնից յետոյ ես լեզալ էի ապրում, իսկ որոշ ժամանակ անց՝ անլեզալ, ընդհուպ մինչև Թիֆլիսից Ռուսաստան մեկնելու, այսինքն՝ մինչև 1922 թ.: Իսկ ԳԷՈՐԳԵԱՆԸ բացարձակապէս լեզալ էր ապրում:

Ինչ վերաբերում է այս բոլորի մեջ Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԻ դերին, ապա յայտարարում եմ, որ նրա ողջ մասնակցութիւնն այս գործում կայանում է միայն այն բանում, որ մեզ օգնելու համար կցեց Յովակիմ ՂՈՒԼԵԱՆԻՆ, Յովհաննէս ՉԱԽԱԼԵԱՆԻՆ ու Աշոտ ԽԱՉԱՆՈՒԿԵԱՆԻՆ:

Ինչպէս Ձեզ յայտնի է, սպանութիւնից յետոյ, ԱԻԵՏԻՍԵԱՆՆ ու ՂԱԶԱԶԵԱՆԸ թաքնուեցին: Մենք նրանց հետ ապրում էինք Յիսնթեան փողոցի շրջանում նոյն բնակարանում: Ամենայն հաւանականութեամբ, ես նրանց պատմել եմ սպանութեան մանրամասները:

Հարցաքննութեան արձանագրութիւնը ինձ կարդացուել է, գրառուած է իմ բաներից և իմ ցուցմունքը հաստատում եմ: ՏԷՐ–ՊՕՂՈՍԵԱՆ

Հարցաքննեց՝

ԳԱՂՏՆԻ ԲԱԺՆԻ 8-րդ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔԻ ԼԻԱԶՕՐ

Գէորկով [ստորագրութիւն]

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 8, գ. 115, թթ. 30–33: Մեքենագիր: Պատճէն: Թարգմանութիւն ռուսերէնից:

ԹԻՒ 4

ՀԱՐՅԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ²⁶

1936 թ. նոյեմբերի 3

Արտաշէս Գալուստի Գէորգեան:

Ծնուած 1894 թ. Էրզրումի նահանգի Խոտորջուր գիւղում, բնակուում է Խոտորջուր գիւղում՝ Ներքին Ախտայի²⁷ շրջանի կոմունա: Ներքին Ախտայի Շրջհողբաժնի²⁸ մեղուաբուծութեան հրահանգիչ: Անկուսակցական:

ՀԱՐՑ: Քննութեանը յայտնի է, որ դուք գրող Ակսել ԲԱԿՈՒՆՅԻ²⁹ հետ մտերիմ փոխյարաբերութիւնների մէջ էք եղել: Տուէք ցուցմունք, թէ երբուանից էք նրան ճանաչում և ի՞նչ հողի վրայ էք մտերմացել:

24 Ատրճանակ, անուանումը ստացել է ստեղծողի՝ Ջոն Բրաունինգի անունից:

25 Փաստաթղթում ռուսերէն տառերով հէնց այդպէս էլ գրուած է:

26 Այս փաստաթուղթը լոյս է տեսել Դավիթ Գասպարյանի «Ակսել Բակունց» գրքում, Եր., 2009, էջ 427–428:

27 Հետագայի՝ Հրազդանի շրջան: Այժմ՝ ՀՀ Կոտայքի մարզի կազմում:

28 Շրջանային հողագործութեան բաժին:

29 Անուանի գրող Ակսել Բակունցը բռնադատուել էր որպէս Խորհրդային Հայաստանում ազգայնական խմբակի ղեկավար:

ՊԱՏԱՍԽԱՆ: 1920 թ. Դոնբասում³⁰ եւ աշխատում էի հանքերում: Ամռանը ես մի քանի օրով անձնական գործերով գնացի Խարկով: Իմ ժամանելու օրը հայկական ակումբի բացումն էր, ուր էլ գնացի: Նշուած ակումբում ինձ մտտեցաւ մի երիտասարդ ուսանող, ով հետագայում պարզուեց Ակսել ԲԱԿՈՒՆՅՑԻ էր, և սկսեց ինձ հարցնել իր եղբայր Երեմի մասին, ում ես ճանաչում էի 1918 թ.-ից Զանգեզուրից, որտեղ ես զինծառայութեան մէջ էի եղել:

Այն մասին, որ ես Երեմի մօտիկ ընկերն եմ, Ակսել ԲԱԿՈՒՆՅՑԻՆ ասել էին Խարկովում բնակուող նրա համագիւղացիները: Այդ ժամանակուանից շարունակում է մեր ծանօթութիւնը:

Ը: 1920 թ.-ից յետոյ որքան յաճախ էիք հանդիպում Ակսել ԲԱԿՈՒՆՅՑԻ հետ:

Պ: Մինչև 1924 թ. Ակսել ԲԱԿՈՒՆՅՑԻ հետ չեմ հանդիպել, քանի որ մինչև 1922 թ. ողջ ժամանակ ապրել եմ Դոնբասում, իսկ 1922 թ. գալով Թիֆլիս՝ ապրեցի մինչև 1923 թ., որից յետոյ վերադարձայ Դոնբաս, որտեղից 1924 թ. մշտական բնակութեան տեղափոխուեցի Հայաստան:

Ակսել ԲԱԿՈՒՆՅՑԻ հետ երկրորդ անգամ հանդիպեցի Հայաստանի Հողժողկոմատում³¹, որտեղ նա գիւղատնտես էր աշխատում: Իսկ ես Հողժողկոմատ էի գնացել Խոտորջուրեան կոմունայի գործով:

Դրանից յետոյ ԲԱԿՈՒՆՅՑԻ հետ հանդիպել եմ մեզ մօտ կոմունայում, երկու կամ երեք անգամ 1932-33 թթ., իսկ [19]34 թ. եղել եմ նրա տանը: Մէկ անգամ նա ինքն է եղել իմ տանը Երևանում:

Իմ վերջին հանդիպումը նրա հետ եղել է 1935 թ., երբ նա վերադարձաւ Մուկուայից՝ գրողների միութեան համագումարից³²:

Ը: Ի՞նչ թեմայով էիք զրուցում ԲԱԿՈՒՆՅՑԻ հետ:

Պ: Հանդիպումների ժամանակ ԲԱԿՈՒՆՅՑԻ ինձնից յատկապէս հետաքրքրում էր Խոտորջուրեան կոմունայի կեանքով ու աշխատանքով: Ես նրանից հետաքրքրում էի գրականութեամբ և արուեստով ու խօսում էինք մի շարք այլ հարցերի շուրջ, մինչդեռ քաղաքական հարցեր երբեք չենք շօշափել:

Ը: ԲԱԿՈՒՆՅՑԻ ձեր ներկայութեամբ հակախորհրդային հայեացքներ արտայայտել է և աշխատել ձեզ հակախորհրդային աշխատանքի մէջ ներգրաւել:

Այս մասին ցուցմունք տուէք:

Պ: Կտրականապէս յայտարարում եմ, որ ԲԱԿՈՒՆՅՑԻ երբեք իմ ներկայութեամբ հակախորհրդային հայեացքներ չի արտայայտել, հետևապէս նա չէր էլ կարող ինձ հակախորհրդային աշխատանքի մէջ ներգրաւելու փորձեր անել:

Ը: ԲԱԿՈՒՆՅՑԻ գիտի, որ դուք մասնակցել էք Թուրքիայի նախկին զինուորական նախարար ԶԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ղէմ ահաբեկչական գործողութեանը:

Պ: Կտրականապէս յայտարարում եմ, որ անձամբ ես այն մասին, որ մասնակցել եմ ԶԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ղէմ ահաբեկչական գործողութեանը, ԲԱԿՈՒՆՅՑԻՆ բացարձակապէս ոչինչ չեմ ասել: Սակայն, հնարատր է նա այդ մասին իմացել է ուրիշներից:

Սոյն ցուցմունքը ընթերցուել է ինձ համար ռուսերէն լեզուով: Արձանագրութիւնը գրուել է իմ խօսքերից ճիշտ: ԳԷՈՐԳԵԱՆ:

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 2056, թ. 16: Մեքենագիր: Պատձէն: Թարգմանութիւն ռուսերէնից:

30 Խորհրդային տարիներին մարզ Ուկրաինայում, աժմ՝ կիսաանկախ:

31 Հողագործութեան ժողովրդական կոմիսարիատ:

32 Նկատի ունի ԽՍՀՄ գրողների միութեան համագումարը:

ԹԻԻ 5
ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեղադրեալ Արտաշէս Գալուստի ԳԷՈՐԳԵԱՆԻ
1936 թ. դեկտեմբերի 31

Հարց: Երբուանից էք հանդիսանում «Դաշնակցութիւն» հ.[ակա]-յ.[եղափոխական] կուսակցութեան անդամ:

Պատասխան: Ես երբեք «Դաշնակցութիւն» կուսակցութեան անդամ չեմ եղել:

Հ: «Դաշնակցութիւն» կուսակցութեան անդամ չլինելով, ինչպէս էք կատարել 1922 թուականին Թիֆլիսում Թուրքիայի նախ.[կին] ռազմական նախարար ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ նկատմամբ ահաբեկչութեան մասին Դ.[աշնակցութիւն] Կ.[ուսակցութեան] որոշումը:

Պ: Թբիլիսիում պատահականօրէն հանդիպելով իմ ծանօթ Պետրոս ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆԻՆ (Քիթապսզ³³), վերջինս ինձ առաջարկեց օգնել իրեն ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ նկատմամբ ահաբեկչութիւն կատարելու, ես համաձայնուեցի և նրա հետ կատարեցինք այդ գործողութիւնը:

Հ: Մինչև ահաբեկչական գործողութեան կատարումը ձեզ յայտնի էր, որ դա Դաշնակցութիւն Կուսակցութեան Կ.[ենտրոնական] Կ.[կոմիտէի] յանձնարարութիւնն է:

Պ: Ոչ:

Հ: Դուք ձիշտ չէք ասում: Մինչև ահաբեկչական գործողութեան կատարումը ձեզ մանրամասն յայտնի է եղել, որ Դ.[աշնակցութիւն] Կ.[ուսակցութեան] Կ.[ենտրոնական] Կ[ոմիտէի] որոշմամբ ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ պէտք է ենթարկուի ահաբեկչութեան և դուք այդ որոշման համաձայն կատարել էք ահաբեկչական գործողութիւն:

Պ: Ոչ, ինձ յայտնի չի եղել:

Հ: Ձեզ յայտնի է եղել, որ Կորիւն ՂԱԶԱԶԵԱՆԸ (Դ.[աշնակցութիւն] Կ.[ուսակցութեան] Կ.[ենտրոնական] Կ.[ոմիտէի] ան.[դամ]) ղեկավարել է ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ նկատմամբ ահաբեկչութեան գործը: Ինչո՞ւ էք այդ թաքցնում:

Պ: Այո, մինչև ահաբեկչական գործողութեան կատարումն ինձ յայտնի էր, որ Կորիւն ՂԱԶԱԶԵԱՆԸ ղեկավարում է այդ գործը, սակայն ես չգիտէի, թէ նա ով է:

Հ: Ձեզ նաև յայտնի է եղել, որ Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԸ նոյնպէս ահաբեկչութեան նախապատրաստմանը գործուն մասնակցութիւն է ունեցել, հաստատու՞մ էք այդ:

Պ: Այո, հաստատում եմ:

Հ: Հետևաբար, ահաբեկչական գործողութիւնը նախօրօք պատրաստուել էր, այլ ոչ թէ պատահականութեան արդիւնք էր, ինչպէս վերևում դուք ասացիք:

Պ: Ճիշտ է, ահաբեկչութիւնը պատահական չէր, այլ պատրաստում էր, բայց ես չեմ մասնակցել դրան:

Հ: Ձեզ յայտնի էր, որ ձեր հայրենակից Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԸ Դաշնակցութիւն կուսակցութեան ակտիւ և անուանի անդամներից մէկն էր:

Պ: Ինձ յայտնի էր, որ նա եղել է խմբապետ³⁴ և ակտիւ դաշնակցական:

Հ: Դուք գիտէի՞ք նաև Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԻՆ որպէս ակտիւ դաշնակցականի:

Պ: Ես Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԻՆ կենսքումս առաջին անգամ տեսել եմ ահաբեկչական գործողութեան կատարումից առաջ և իմացել, որ նա նոյնպէս ակտիւ դաշնակցական է:

Հ: Եւ այսպէս, մինչև ահաբեկչական գործողութեան կատարումը ձեզ յայտնի էր, որ ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ նկատմամբ ահաբեկչութեան գործը ղեկավարում են ակտիւ

33 Ինչպէս արդեն նշեցինք՝ սա Պետրոսի մականունն է եղել:

34 Խմբապետ բառը բնագրում ռուսերէն տառերով գրուած է հէնց այդպէս:

դաշնակցականները:

Պ: Այո, մինչև ահաբեկչական գործողության կատարումն ինձ յայտնի էր, որ այդ գործը ղեկավարում են դաշնակցականները:

Հ: Նշանակում է դուք կատարել էք Դաշնակցություն Կ.[ուսակցության] Կ.[ենտրոնական] Կ.[ումիտէի] որոշումը: Ընդունում էք դա:

Պ: Ինձ յայտնի չէր, որ Դաշնակցություն Կ.[ուսակցության] Կ.[ենտրոնական] Կ.[ումիտէի] նման որոշում է ունեցել: Սակայն, ահաբեկչական գործողության կատարումից առաջ ես իմացայ, որ այդ գործը ղեկավարում է ակտիվ դաշնակցականների խումբը՝ ի դեմս Կորին ՂԱԶԱԶԵԱՆԻ, Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԻ և Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԻ:

Հ: Ձեր նշած անձինք՝ Կորին ՂԱԶԱԶԵԱՆԻ, Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԻ և Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԻ, եղել են Դաշնակցություն կուսակցության Կ.[ենտրոնական] Կ.[ումիտէի] անդամներ, ինչի մասին ձեզ լաւ յայտնի էր: Տուէք ցուցմունք:

Պ: Դա ինձ յայտնի է դարձել 1922 թ. նրանց ձեռքակալուելուց յետոյ, այդ ժամանակ էլ Պետրոս ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆԻ ինձ ասել է, որ նրանք հանդիսանում են Դաշնակցություն կուսակցության Կ.[ենտրոնական] Կ.[ումիտէի] անդամներ, և որ նրանց որոշումով է կատարուել ՁԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ նկատմամբ ահաբեկչական գործողությունը:

Հ: Պատմէք մանրամասն, թէ ձեզ հետ ո՞վ է մասնակցել ՁԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ նկատմամբ ահաբեկչական գործողության կատարմանը, ինչպէ՞ս էք պատրաստուել դրան և ումից էք ստացել առաջադրանքը:

Պ: 1922 թ. Թբիլիսիում փողոցում ես հանդիպեցի իմ նախ.[կին] ընկերոջը և դաշ.[նակցական] խմբերի³⁵ ծառայակցիս՝ Պետրոս ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆԻՆ (Քիթապագ), նա ինձ ասաց, որ ՁԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ նկատմամբ ահաբեկչական գործողություն է պատրաստում, և խնդրեց իրեն օգնել այդ գործին մասնակցութեամբ: Ես համաձայնուեցի: Յետոյ Պետրոսն ասաց, որ այդ գործին մասնակցում է նաև Աշոտ Խաչ-Մանուկեանը, ում նոյնպէս ճանաչում էի դաշ[նակցական]խմբապետ³⁶ Սեպուհի ջոկատում համատեղ ծառայութիւնից: Յաջորդ օրը մենք, այսինքն՝ ես, Արտաշէս Գևորգեանը, Պետրոս ՏԷՐ-Պօղոսեանը և Աշոտ Խաչ-Մանուկեանը, այն ռեստորանում էինք, որտեղ այցելում էր ՁԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ, իմ ընկերները պէտք է ինձ ցոյց տային ՁԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ դէմքը: Հէնց նոյն օրը ռեստորանում էր գտնուում ՁԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ, ում ինձ ցոյց տուեց Պետրոս ՏԷՐ-Պօղոսեանը: Ընթրելով՝ մենք գնացինք: Երկրորդ օրը ինչ-որ ճաշարանում ես ու Պետրոսը (չեմ յիշում Աշոտը մեզ հետ էր, թէ ոչ) ընթրում էինք, ներս մտան Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԻ և ինձ անծանօթ մի մարդ, ում հետ ինձ ծանօթացրեցին և պարզուեց, որ նա Կորին ՂԱԶԱԶԵԱՆԻ է, ում մասին Պետրոս ՏԷՐ-Պօղոսեանը ինձ ասել էր, որ նա ՁԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ նկատմամբ ահաբեկչության կազմակերպման ղեկավարն է, այդ կամ հետագայ հանդիպումների ժամանակ ես իմացայ, որ Կորին ՂԱԶԱԶԵԱՆԻ և Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԻ ակտիվ դաշնակներ են և նրանք մեզ հետ զրուցում էին ՁԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ նկատմամբ ահաբեկչական գործողության կատարման շուրջ: Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԻՆ որպէս ակտիվ դաշնակցականի ես վաղուց գիտէի: Նա ևս մեզ հետ զրուցեց ահաբեկչության շուրջ:

Հ: Մինչև ահաբեկչական գործողության կատարումը քանի՞ անգամ էք հանդիպել Կորին ՂԱԶԱԶԵԱՆԻՆ, Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԻՆ և Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԻՆ:

Պ: Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԻՆ ընդամենը մէկ անգամ, Կորին ՂԱԶԱԶԵԱՆԻՆ և Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԻՆ մի քանի անգամ:

Հ: Շարունակեցէք ձեր ցուցմունքը:

Պ: Յուլիս ամսին, ամսաթիւն այժմ չեմ յիշում, այն բանից յետոյ, երբ ես տեսայ

35 Բնագրում ռուսերէն տառերով գրուած է խումբ:
36 Բնագրում ռուսերէն տառերով գրուած է դաշխմբապետ:

ԶԵՄԱԼ ՓԱՇՄՅԻ ղէմքը, երեկոյեան մենք, այսինքն՝ ես ու Պետրոս Տէր-Պօղոսեանը, նստած էինք ինձ համար անյայտ փողոցի դերձակի արհեստանոցում, և տեսանք, թէ ինչպէս ԶԵՄԱԼ ՓԱՇՄՆ երկու թուրքի հետ անցնում էր փողոցով: Պետրոսն առաջարկեց գնալ նրանց յետևից, հետևել, թէ ուր են գնում: Մենք դուրս եկանք և սկսեցինք հետևել նրանց: Նախկին Պետրոս Մեծի փողոցի անկիւնում որսալով յարմար պահ Պետրոսն առաջարկեց ահաբեկչական գործողութիւնը կատարել, ինչը և արեցինք: ԶԵՄԱԼ ՓԱՇՄՅԻ վրայ առաջինը «Մաուզեր»³⁷ ատրճանակից կրակեց Պետրոսը, ապա մենք միասին կրակեցինք ինչպէս ԶԵՄԱԼ ՓԱՇՄՅԻ, այնպէս էլ՝ նրան ուղեկցողների վրայ: Ես կրակեցի 9 անգամ: Բոլոր երեքին սպանեցինք, ուղեկցողներից մէկը փախաւ մի կողմ, ես վազեցի նրա յետևից և նրան ևս սպանեցի: Դրանից յետոյ թաքնուելու նպատակով փախանք, ճանապարհին շրջապատեցին Պետրոսին բռնելու նպատակով, մի հրշէջ մօտեցաւ Պետրոսին, բայց ես այդ պահին կրակելով սպանեցի նրան և այդպէս մենք փրկուեցինք: Ծանապարհին մենք մտանք ինչ-որ մի բակ, որտեղ ես «Մաուզեր»ը տուեցի Պետրոսին և գնացի տուն, այսինքն՝ Պուշկինեան թիւ 11: Ես ապրում էի իմ հեռաւոր ազգական Գէորգ Գէորգեանի բնակարանում: Դրանից մի քանի օր յետոյ ես հանդիպեցի Պետրոս Տէր-Պօղոսեանին, վերջինս ինձ ասաց, որ ահաբեկչական գործողութեան կատարումից յետոյ ինքը գնացել է Կորիւն ՂԱԶԱԶԵԱՆԻ մօտ և Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԻ, Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԻ հետ խնջոյք են արել յաջող իրականացում զործի պատուին: Դրանից յետոյ նրանք անցել են խոր ընդյատակ և ես նրանց, այսինքն՝ Կորիւն ՂԱԶԱԶԵԱՆԻՆ, Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԻՆ և Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԻՆ չեմ տեսել, երբեմն հանդիպել եմ Պետրոսին, ով մի անգամ ասաց, որ վերոյիշեալ երեքն արդէն ձերբակալուել են և որ գոյութիւն է ունեցել ընդյատակեայ դաշնակցական կազմակերպութիւն, և նրանք եղել են կազմակերպութեան ղեկավարները, ինչի համար էլ ձերբակալուել են:

Հ: Մինչև ահաբեկչական գործողութեան կատարման իրականացումն ինչպէ՞ս էք պայմանաւորուել այդ գործի ղեկավարների, ինչպէս նաև մասնակիցների հետ գործի տապալման կամ ձերբակալման դէպքում հարցաքննութեան ժամանակ ձեր վարքագծի մասին:

Պ: Հնարաւոր է պայմանաւորուածութիւն եղել է, սակայն ես չեմ յիշում:

Հ: Դուք անձամբ ձերբակալութեան դէպքում ինչպիսի՞ ցուցմունք կտայիք:

Պ: Ես պէտք է խոստովանէի:

Հ: Դուք պէտք է խոստովանէիք միայն ձեր անձնական մասնակցութիւնը, թե՛ բացայայտէիք ողջ գործը:

Պ: Այդ հարցին այժմ դժուար է պատասխանել, քանի որ շատ տարիներ են անցել:

Հ: 1928 թ. Հայաստանի ն.ախկին ՊԹՎ-ի³⁸ կողմից դուք հարցաքննուել էք ԶԵՄԱԼ ՓԱՇՄՅԻ նկատմամբ ահաբեկչութեան առթիւ, դուք չէք խոստովանել և թաքցրել էք ինչպէս ձեր մասնակցութիւնը, այնպէս էլ դաշ. նակցական ընդյատակի մասնակցութիւնը, ինչը վկայում է, որ դուք նպատակ չէք ունեցել բացայայտելու այդ գործը և մատնել ձեր ընկերներին: Ընդունում էք դա:

Պ: Այո, ընդունում եմ: Իրօք, 1928 թ. Հայաստանի ն.ախկին ՊԹՎ-ի կողմից ԶԵՄԱԼ ՓԱՇՄՅԻ նկատմամբ ահաբեկչութեան գործով հարցաքննուելով, քննութիւնից թաքցրել եմ ինչպէս իմ, այնպէս էլ ուրիշների մասնակցութիւնը:

Սոյն ցուցմունքը ընթերցուել է ինձ համար ռուսերէն լեզուով: Արձանագրութիւնը գրուել է իմ խօսքերից ճիշտ: ԳԷՈՐԳԵԱՆ:

Հարցաքննեց՝

ՆԳԺԿ ՊԼՎ ԳԹԲ³⁹ պետի տեղակալ

37 Անուննումը ստացել է ստեղծողների՝ Մաուզեր եղբայրների անունից:

38 Պետական քաղաքական վարչութիւն – խորհրդային անվտանգութեան ծառայութիւն:

39 Գաղտնի քաղաքական բաժին:

Պետ.[ական] անվտանգության առ.[ագ] լեյտենանտ ԿՈՍՏԻԿԵԱՆ
ՊԱՎ ԳՔԲ 2-րդ բաժանմունքի պետ
Պետ.[ական] անվտանգության առ.[ագ] լեյտենանտ ԹՈՎՄԱՍԵԱՆ

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 2056, թթ. 20-23: Մեքենագիր: Պատճէն: Թարգմանություն ուսերէնից:

**ԹԻԻ 6
ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ**

Մեղ.[ադրեալ] Արտաշէս ԳԷՈՐԳԵԱՆԻ
1937թ. Յունուարի 22

Հ: Քննությունը կրկին ձեր առջև հարց է դնում, երբ էք էլի 1926 թ.-ից յետոյ Դոնբասում եղել:

Պ: 1926 թ.-ից յետոյ ես երբեք այլևս Դոնբաս չեմ գնացել:

Հ: Դուք ճիշտ չէք ասում, 1934 թ. Լենինգրադ էքսկուրսիա ուղևորութեան ժամանակ յետադարձ ճանապարհին ձեր կնոջ հետ միասին գնացել էք Կադիսկա⁴⁰, ինչո՞ւ էք դա թաքցնում քննությունից:

Պ: Ճիշտ չէ, ես Կադիսկայում չեմ եղել:

Հ: Ձեզ է ներկայացում ձեր եղբայր Երուանդ ԳԷՈՐԳԵԱՆԻ ցուցմունքը, ով հաստատում է, որ դուք իրօք 1934 թ. եղել էք Կադիսկայում (ընթերցում է Երուանդ ԳԷՈՐԳԵԱՆԻ 21.1.[19]37 թ. ցուցմունքը): Ընդունո՞ւմ էք սա:

Պ: Բայց եղբայրս սխալում է, ես Կադիսկայում չեմ եղել:

Հ: Այդ դէպքում ինչո՞ւ է ձեր եղբայր Երուանդ ԳԷՈՐԳԵԱՆԸ ձեր վրայ այդպիսի ցուցմունք տալիս:

Պ: Պատճառները ինձ յայտնի չեն, ես Կադիսկայում չեմ եղել:

Հ: Դուք Իւան Ռեհանեանին ճանաչո՞ւմ էք:

Պ: Այո, ճանաչում եմ, նա Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԻ քեռին է և բոլոր դաշնակների հովանաւորը, Կորին ՂԱԶԱԶԵԱՆԸ, Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԸ, Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԸ, Պետրոս ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆԸ Կադիսկայում 1923 թ. ապրում էին նրա մօտ: Նա ակտիւ դաշնակ է և մինչ այժմ էլ մնում է դաշնակ:

Հ: Ընթերցում է ակտիւ դաշնակ Իւան Ռեհանեանի 1936 թ. նոյեմբերի 30-ի ցուցմունքն այն մասին, որ դուք 1934 թ. ամռանը եղել էք Կադիսկայում: Ընդունո՞ւմ էք դա:

Պ: Ես Դոնբասում չեմ եղել, Կադիսկայում՝ նոյնպէս:

Հ: Նշէք դէպի Լենինգրադ և յետադարձ ձեր երթուղին, ո՞վ կարող է հաստատել:

Պ: Երթուղին այսպիսին էր՝ Երևան-Մոսկուա, այդ ժամանակ իմ կինը՝ Արփենիկը, հիւրընկալում էր Մոսկուայում իր քրոջ՝ Մարգո ՌՈՍՏՈՄԵԱՆԻ մօտ, ես էքսկուրսիայից առանձին աւելի վաղ էի եկել Մոսկուա, հանգրուանեցի Մարգո ՌՈՍՏՈՄԵԱՆԻ մօտ, մի քանի օրից յետոյ ժամանեցին «Կար.[միր] հովիտ⁴¹» կոլտնտեսութեան էքսկուրսանտները և նրանց ու կնոջս հետ միասին մեկնեցինք Լենինգրադ: Այնտեղ մնացինք 10 օր և 1933 թ. դեկտեմբերի 31-ին Լենինգրադ-Օդեսա գնացքով մեկնեցինք բոլոր էքսկուրսանտների հետ միասին: Օդեսայից շոգենաւով գնացինք Բաթում, և քանի որ կինս վատ էր զգում, մենք երկուսով՝ ես ու կինս, իջանք Փոթիում, այնտեղից եկանք Երևան:

Դա կարող են հաստատել «Կարմիր հովիտ» կոլտնտեսութեան անդամները՝

40 Քաղաք Դոնբասում:

41 Բնագրում ուսերէն տառերով գրուած է՝ Կար. հովիտ:

Ասլան ԱՍԼԱՆԵԱՆԸ՝ ՀամԿ(բ)Կ⁴² անդամ, Հրաչ ՄԿՐՏՉԵԱՆԸ՝ ՀամԿ(բ)Կ [անդամութեան] թեկնածու, Յովհաննէս ՊԵՏՐՈՍԵԱՆԸ՝ ՀամԿԵՄ⁴³ անդամ, Թաթմանեան Սերոբը՝ անկուսակցական:

Սոյն ցուցմունքը ընթերցուել է ինձ համար ռուսերէն լեզուով: Արձանագրութիւնը գրուել է իմ խօսքերից ձիշտ: Ա. ԳԷՈՐԳԵԱՆ:

Հարցաքննեց՝
ՆԳԺԿ ՊԱՎ IV բաժնի պետ
Պետական անվտանգութեան աւագ լէյտենանտ ԿՈՍՏԻԿԵԱՆ
ՆԳԺԿ ՊԱՎ IV բաժնի բաժանմունքի պետ
Պետական անվտանգութեան աւագ լէյտենանտ ԹՈՎՄԱՍԵԱՆ
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 2056, թթ. 34-35: Մեքենագիր: Պատձէն: Թարգմանութիւն ռուսերէնից:

ԹԻԻ 7 ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեղ.[ադրեալ] Արտաշէս Գէորգեան
1937 թ. յունուարի 23

Հ: 22.1.[19]37-ին հարցաքննութեան ժամանակ Դուք յայտնեցիք, որ 1933 թուականին մեկնել էք Մոսկուա, այնուհետև՝ Լենինգրադ: Քննութիւնը պահանջում է նշել, թե ամսի քանիսի՞ն էք մեկնել Երևանից:

Պ: Ստոյգ օրը չեմ յիշում, դա 1933 թուականի դեկտեմբերի սկզբին էր:

Հ: Ո՞վ էր Ձեզ հետ [գտնուում] նոյն վազոնում:

Պ: Երևանից ինձ հետ նոյն վազոնում և հէնց նոյն կուպէում⁴⁴ ուղիղ մինչև Մոսկուա գնում էր մի գիտաշխատող-ասիստենտ, ազգանունը կամ Ծատուրեան էր կամ Աստուածատուրեան, նա աշխատում էր Երևանի ինչ-որ մի ինստիտուտում: Ազգանունը հնարաւոր է սխալուեմ, բայց դէմքով լաւ եմ ճանաչում:

Հ: Ո՞վ էր Ձեզ ճանապարհում Երևանի կայարանում և ի՞նչ գնացքով մեկնեցիք:

Պ: Մեկնեցիք երեկոյեան ժամը 8-ի գնացքով, գնացքի համարը չեմ յիշում, ճանապարհում էին ինձ, թէ ոչ՝ նոյնպէս չեմ յիշում:

Հ: Մոսկուա ուղևորութեան ճանապարհին որտե՞ղ էք կանգառ արել, փոխել գնացքը:

Պ: Ոչ մի տեղ ոչ կանգառ եմք արել, ոչ էլ գնացք եմք փոխել, ուղիղ գնացել եմք Մոսկուա:

Հ: Ժամը քանիսի՞ն հասաք Մոսկուա և ո՞վ ձեզ դիմաւորեց Մոսկուայի կայարանում:

Պ: Ժամանեցի լուսաբացին, կայարանում ինձ դիմաւորեցին՝ իմ կիներ՝ Արփենիկ Գէորգեանը, նրա քոյրը՝ Մարգօ Ռոստոմեանը և վերջինիս ամուսինը՝ Բաբկէն Աթանէսեանը, նա ՀամԿ(բ)Կ անդամ է, սովորել է ՄՄԻ-ում (Մոսկվայի մեխանիկական ինստիտուտ), ապրում էր Լեֆորտովսկի Վալ, 7-րդ մասնաշէնք, բն. 55: Հասցէի ձգբրտութեան համար չեմ երաշխաւորում, հնարաւոր է՝ սխալուեմ:

Հ: Պատմէք, թէ որտե՞ղ էք եղել ամբողջ 1934 թուականի ընթացքում:

Պ: Ամբողջ 1934 թուականի ընթացքում ես «Կարմիր հովիտ» կոլտնտեսութեան մեղուապահական ֆերմայի վարիչն էի: Հայաստանի սահմաններից դուրս չեմ եկել: 1934 թուականի գարնանից ֆերման տեղակայուած էր երեք կէտերում՝ «Կարմիր

42 Համամիութենական կոմունիստական (բոլշևիկեան) կուսակցութիւն:

43 Համամիութենական լենինեան կոմունիստական երիտասարդական միութիւն:

44 Գնացքի վազոնի առանձնասենեակ:

հովիտ» կոլտնտեսությունում, «Կարմիր հովիտ» կոլտնտեսությունից երեք կիլոմետր հեռու գտնուող Կարակալա գիւղում և կոլտնտեսությունից 12 կմ հեռու գտնուող Թայֆարովա⁴⁵ գիւղում: Մինչև աշուն ես եղել եմ երեք կէտերում, բայց ֆերմայի գործերով մի քանի անգամ եկել եմ Երևան, կոլտնտեսության համար գնել եմ տարբեր տեսակի գոյք, воощину, մանուֆակտուրա և այլն: Աշնանը եկամտի բացակայության հետևանքով ֆերման տեղափոխուել է Երևանի մտակայքում գտնուող ցածրադիր շրջանի Թագազիւր գիւղը և մինչև 1935 թուականի գարուն ես գտնուել եմ Երևանում և հետևում էի ֆերմայի գործերին: Երբեմն կոլտնտեսության գործերով գնում էի կոլտնտեսություն:

Ինձ հետ միասին ֆերմայում աշխատում էին հետևեալ կոլտնտեսականները՝ Յովսէփ Ապոզեանցը, Պօղոս Վարդանեանցը⁴⁶, Յովհաննէս Պետրոսեանը, Ն.Երքին] Ախտայի շրջանի Մարմարիկ գիւղի ոչ կոլտնտեսականներ Ռուբէն Քարամեանը, Ազատ Կարապետեանը, Արմենակ Սեթոյեանը և Անդրանիկ Գալուստեանը, և Երևանից՝ Արտաշէս Յովնանեանը: Բոլոր նշուած անձինք և մեր կոլտնտեսության անդամները կհաստատեն, որ ես 1934 թուականին Հայաստանից ոչ մի տեղ չեմ մեկնել:

Հարցաքննության արձանագրությունը իմ համար ընթերցուել է և գրուել է իմ խօսքերով ձիշտ է: Ա. Գէորգեան: Ստորագրություն:

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 2056, թթ. 36-37: Ձեռագիր: Բնագիր: Թարգմանություն ուսերէնից:

ԹԻՒ 8

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեղ.[աղրեալ] Արտաշէս ԳԷՈՐԳԵԱՆԻ
1937 թ. յունուարի 24

Հ: 31.XII.[19]36 թ. հարցաքննության ժամանակ դուք խոստովանել էք, որ Ջեմալ Փաշայի նկատմամբ իրականացուած ահաբեկչությունը կազմակերպուած է եղել Վրաստանի Դաշնակ.[ցական] Կ.[ենտրոնական] Կ.[ոմիտէի] կողմից, սակայն դուք իբր չէք մասնակցել ահաբեկչության նախապատրաստման գործին: Ձեր ցուցմունքի վերջին մասը քննությունը համարում է կեղծ, քանի որ ահաբեկչության նախապատրաստմանը դուք ունեցել էք ամենից գործուն մասնակցություն: Պահանջում ենք խոստովանություն:

Պ: Կրկին հաստատում եմ, որ ահաբեկչական գործողության իրականացումից յետոյ ես իմացայ, որ ահաբեկչության կազմակերպումը գլխաւորում է Դ.[աշնակցություն] Կ.[ուսակցության] Վրաստանի Կ.[ենտրոնական] Կ.[ոմիտէն]: Սակայն, կրկնում եմ, որ ես նախապատրաստմանը չեմ մասնակցել:

Հ: Պետրոս Տէր-Պօղոսեանի հետ ձեր հանդիպումից քանի՞ օր յետոյ դուք իրականացրեցիք ահաբեկչական գործողությունը:

Պ: Մօտաւորապէս տասը օր:

Հ: Այդ ժամանակահատուածում դուք հետևել էք Ջեմալ Փաշային, հանդիպել էք «Դաշնակցություն» կուսակցության Վրաստանի Կ.[ենտրոնական] Կ.[ոմիտէի] անդամներ Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԻ, Կորիւն ՂԱԶԱԶԵԱՆԻ, Տիգրան ԱԻՏԻՍԵԱՆԻ հետ, նրանցից ստացել էք տեղեկատւություններ Ջեմալ Փաշայի երթուղիների մասին, նրանցից ստացել էք ցուցմունքներ: Դա ահաբեկչության նախապատրաստմանը մասնակցել չէ՞:

45 Այսպէս է ընթերցուում: Պետք է լինի Թայշարովա:

46 Ազգանունը յստակ չի ընթերցուում:

Պ: Մինչև իմ Թբիլիսի գալը ահաբեկչության նախապատրաստումն ընթանում էր և ես գալով՝ մասնակցեցի դրան, այսինքն՝ Պետրոս Տէր-Պողոսեանի հետ համատեղ հետևում էի Ջենալ Փաշային, Պետրոսից «Մաուզեր» տեսակի ատրճանակ ստացայ, հանդիպեցի ակտիվ դաշնակներ Կորին ՂԱԶԱԶԵԱՆԻ, Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԻ, Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԻ հետ, վերջիններս գիտէին, որ ես պէտք է մասնակցէի ահաբեկչական գործողութեանը:

Հ: Որտեղ և երբ է «Դաշնակցութիւն» կուսակցութեան Վրաստանի Կենտրոնական] Կոմիտէն] որոշել Ջենալ Փաշային ահաբեկել:

Պ: Ահաբեկչական գործողութեան իրականացումից յետո 1922 թ. Պետրոս Տէր-Պողոսեանն ինձ ասաց Ջենալ Փաշային ահաբեկելու մասին Դ.աշնակցութիւն] Կ.կուսակցութեան] Վրաստանի Կ.կենտրոնական] Կ.կոմիտէի] որոշման մասին, սակայն որտեղ և երբ էր դա որոշուած՝ ինձ յայտնի չէ: Պետրոսն ինձ այդ մասին չի ասել:

Հ: Պատմէք ահաբեկչական գործողութեան իրականացումից յետոյ Թբիլիսիում ձեր գտնուելու մասին:

Պ: Ահաբեկչական գործողութեան իրականացումից յետոյ ես շարունակում էի մնալ Թբիլիսիում մօտաւորապէս մէկ ամսից քիչ աւելի, և աշխատում էի ն.ախակին] Գոգոլեան փ.կողոց] թ.կու] 41 գտնուող փոռում: Երբեմն հանդիպում էի Պետրոս Տէր-Պողոսեանին, ով գրոյցների ընթացքում յայտնեց «Դաշնակցութիւն» կուսակցութեան անդամների շրջանում ձերբակալութիւնների մասին, այդ թում Կորին ՂԱԶԱԶԵԱՆԻ, Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԻ և այլոց, սակայն Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԸ չէր ձերբակալուել և շարունակում էր ապրել Թբիլիսիում: Նրա հետ հանդիպել եմ, սակայն գրոյցներ չենք ունեցել: Այնուհետև, ես մեկնեցի Ռոստով իմ փեսայ Աֆանասի Իւանի ԱՊՈԶԵԱՆՑԻ մօտ, որտեղ մնացի մի քանի օր:

Հ: Ասել էք արդեօք Աֆանասի Իւանի ԱՊՈԶԵԱՆՑԻՆ ահաբեկչական գործողութեանը ձեր մասնակցութեան մասին:

Պ: Աֆանասի ԱՊՈԶԵԱՆՑԸ գիտէր այդ մասին:

Հ: Ապոզեանց Աֆանասին որտեղից գիտէր այդ մասին:

Պ: Ինձ յայտնի չէ, թէ որտեղից գիտէր Աֆանասի ԱՊՈԶԵԱՆՑԸ Ջենալ Փաշայի դէմ իրականացուած ահաբեկչական գործողութեան մէջ իմ մասնակցութեան մասին:

Հ: Հետևաբար, Աֆանասի ԱՊՈԶԵԱՆՑԻՆ իմանալով ձեզ որպէս ահաբեկչութեան մասնակցի, թաքցրել է և չի մատնել ձեզ իշխանութիւններին:

Պ: Նա իմանալով ինձ որպէս Ջենալ Փաշայի դէմ իրականացուած ահաբեկչական գործողութեան մասնակցի՝ չի մատնել իշխանութիւններին:

Հ: Ահաբեկչական գործողութեան իրականացումից յետոյ որտեղ և երբ էք հանդիպել Կորին ՂԱԶԱԶԵԱՆԻ, Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԻ, Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԻ և Պետրոս Տէր-ՊՕՂՈՍԵԱՆԻ հետ:

Պ: 1923 թ. ես աշխատում էի Վարվարոպոլի հանքում, այդ նոյն Կադիկկայի շրջանում իրենց ազատ արքորն էին անցկացնում՝ բացառութեամբ Պետրոս Տէր-Պողոսեանի, մնացած բոլորը: Տէր-Պողոսեանը չէր աշխատում Կադիկկայում: Նրա հետ ես հանդիպել եմ մի քանի անգամ:

Հ: Ի՞նչ քաղաքական հարցերի մասին էիք խօսում նրանց հետ այդ հանդիպումների ժամանակ:

Պ: Մենք յիշում էինք իրականացուած ահաբեկչական գործողութեան մասին, գոհ էինք, որ ամէն ինչ այդպէս յաջող անցաւ և մեզ պատասխանատուութեան չենթարկեցին: Այլ խօսակցութիւններ չունէինք:

Հ: Հետևաբար, Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԸ և նրա միւս ընկերները (Կորին ՂԱԶԱԶԵԱՆ, Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆ) ասել են Ջենալ Փաշային ահաբեկելու «Դաշնակցութիւն» կուսակցութեան Վրաստանի Կ.կենտրոնական] Կ.կոմիտէի] որոշման մասին:

Պ: Չեմ յիշում, այդպիսի խօսակցութիւններ չեն եղել: Ես չէի հետաքրքրում,

քանի որ դա հասկանալի էր:

Ա. Գէորգեան⁴⁷

Հարցաքննությունն ընդհատուել է:

Հ: Կադիկալայում ինչպիսի՞ հ.[ակա] յ.[եղափոխական] դաշնակցական աշխատանք էին վարում այն ժամանակ Կորին ԴԱԶԱԶԵԱՆԸ, Տիգրան ԱԻԵՏԻՍԵԱՆԸ և Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԸ:

Պ: Անկասկած, նրանք հ.[ակա] յ.[եղափոխական] աշխատանք էին վարում, սակայն ինձ դրա մասին յայտնի չէ:

Հ: Որքան ժամանակ էք մնացել Վարվարոպոլում:

Պ: 1923 թուականին ես Թբիլիսիից գնացի Վարվարոպոլ (Կադիկալայի շրջան) և այնտեղից վերադարձայ Թբիլիսի 1934 թուականի յունուար ամսին, իսկ այնուհետև՝ Երևան:

Հ: Ե՞րբ էք էլի մեկնել Դոնբաս և ի՞նչ գործերով:

Պ: 1926 թուականին ես և իմ ընկեր Միխայիլ ԹԱՆԴՈՒՐՁԵԱՆԸ Հայկ.[ական] ԽՍՀ Ն.[երքին] Ախտայի շրջանի Խոտորջուրեան կոմունայի կողմից գործուղուել ենք Դոնբաս հետևեալ նպատակներով՝ 1. կոմունայում խոտորջուրցիներին ներգրաւելու, 2. կոմունայի գումարի հանգանակութեան, և 3. անասունի գնման:

Հ: Ուղևորութեան ժամանակ դաշնակներից ո՞ւմ հետ էք այն ժամանակ հանդիպել:

Պ: Կրասնոդար քաղաքում ես հանդիպեցի Պետրոս Տէր-Պօղոսեանին, իսկ Դոնբասում դաշնակներից ոչ մէկի հետ հանդիպում չեմ ունեցել:

Հ: Ի՞նչ աշխատանք է վարել այն ժամանակ դաշնակցական ընդյատակը Դոնբասում և Ուկրաինայի ու ՌԽՖՍՀ-ի այլ քաղաքներում:

Պ: Խոտորջուրցի Կոնստանտին ԹԱՐԻՄԵՆԵԱՆԻ խօսքերից, ով այն ժամանակ ապրում էր Կիևում⁴⁸, ինձ յայտնի դարձաւ, որ Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԸ եղել է Կիևում և կազմակերպել է դաշնակցական բջիջ և դրամահաւաք իրականացրել: Այդ ընդյատակեայ կազմակերպութեան մէջ ստել է մօտ 10 մարդ, որոնք ապրում էին Կիևում, նրանց ազգանունները ես հիմա չեմ յիշում, բացառությամբ Եղիա ՃՂԻԿԵԱՆԻ: Այդ նոյն 1926 թ. յունուարին Ստեփան ԾԱՂԻԿԵԱՆԸ եղել է Վորոնեժ⁴⁹ քաղաքում և յօգուտ դաշնակցական ընդյատակի դրամահաւաք իրականացրել, այս մասին ինձ ասել են մի շարք խոտորջուրցիներ, որոնց ազգանուններն այժմ չեմ յիշում: Ահա այն ամէնը, ինչի մասին ինձ յայտնի դարձաւ Դ.[աշնակցություն] Կ.[ուսակցութեան] 1926 թուականի աշխատանքի մասին:

Հ: Ընդյատակեայ դաշնակցական աշխատանքի մասին Պետրոս Տէր-Պօղոսեանը ձեզ ի՞նչ է ասել:

Պ: Պետրոս Տէր-Պօղոսեանն ինձ ասել է, որ նա հիասթափուած է Դ.[աշնակցություն] Կ.[ուսակցութեան] աշխատանքից, որ նա հեռացել է Դաշնակցություն կուսակցությունում աշխատանքից և մտադիր է զբաղուել խաղաղ աշխատանքով:

Հ: Ուկրաինայում ապրող հայերից էլ ո՞վ էր մտնում հ.[ակա]-յ.[եղափոխական] դաշնակցական կազմակերպութեան մէջ:

Պ: Ոչ ոքի չեմ յիշում:

Հ: 1926 թ.-ից յետոյ քանի՞ անգամ և ե՞րբ էք եղել Դոնբասում:

Պ: Ես այլևս երբեք չեմ եղել Դոնբասում:

Հարցաքննութեան արձանագրությունն ինձ համար ընթերցուել և գրուել է իմ

47 Ստորագրություն չկայ:

48 Ուկրաինայի մայրաքաղաք:

49 Քաղաք Ռուսաստանում:

խօսքերով ճիշտ: Ա. ԳԷՈՐԳԵԱՆ⁵⁰:

Հարցաքննեց՝

ՆԳԺԿ ՊԱՎ IV բաժնի պետ

Պետական անվտանգության առաջ լեյտենանտ ԿՈՍՏԻԿԵԱՆ

ՆԳԺԿ ՊԱՎ 2-րդ բաժնի IV բաժանմունքի պետ

Պետական անվտանգության առաջ լեյտենանտ ԹՈՎՄԱՍԵԱՆ

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 2056, թթ. 28-31: Մեքենագիր: Պատձև: Թարգմանություն ռուսերէնից:

ԹԻԻ 9

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Արտաշէս Գալուստի ԳԷՈՐԳԵԱՆԻ

1937 թ. յունուարի 25

Հ: Մանրամասն նշէք, թէ որտեղ և ինչ պայմաններում էք հանդիպել Դոնբասից եկած Աֆանասի Ապոզեանի հետ:

Պ: Աֆանասի Ապոզեանի հետ հանդիպել եմ 1935 թուականի ամռանը «Կարմիր հովիտ» կոլտնտեսությունում՝ կոլտնտեսական Յովսէփի Ապոզեանի տանը, ով Աֆանասի Ապոզեանի ազգականն է:

Հ: Երբ դուք հանդիպեցիք Աֆանասի Ապոզեանի հետ, ո՞վ կար Յովսէփի Ապոզեանի տանը:

Պ: Բացի Յովսէփի Ապոզեանի կնոջից և երեխաներից, այլ ներկաների ես չեմ յիշում:

Հ: Ի՞նչ հարցերի շուրջ էք զրուցել Աֆանասի Ապոզեանի հետ:

Պ: Ջրոյցն ընթանում էր մեր կենցաղային հարցերի շուրջ: Լաւ յիշում եմ, որ ես մեծ վէճ ունեցայ Աֆանասի Ապոզեանի հետ կուլտուրականության շուրջ: Ապոզեանը բացասաբար էր վերաբերում մեր կուլտուրականությանը: Այլ հարցեր, որքան յիշում եմ, չենք շօշափել:

Հ: Հանդիպել էք արդե՞ծք Աֆանասի Ապոզեանի հետ Երևան քաղաքում: Հաստատելու դէպքում մանրամասնէք ձեր հանդիպման նպատակը:

Պ: Աֆանասի Ապոզեանը՝ որպէս իմ ազգական, պէտք է գար ինձ մօտ և տեսակցել ինձ, սակայն չեմ յիշում, եկաւ արդե՞ծք Ապոզեանը իմ տուն, թէ՞ ոչ:

Հ: Քննութեանը ստոյգ յայտնի է, որ Երևանում Աֆանասի Ապոզեանն այցելել է ձեր բնակարան և ձեր հետ հանդիպել ձեր բնակարանում: Քննութիւնը ձեզնից պահանջում է ձմարտացի ցուցմունք տալ այդ հարցի վերաբերեալ:

Պ: Կրկնում եմ, որ ես չեմ յիշում, թէ Երևանում արդե՞ծք Աֆանասի Ապոզեանը ինձ հետ հանդիպել է:

Հ: Երևան քաղաքում ո՞ւմ մօտ է հանգրուանել Աֆանասի Ապոզեանը:

Պ: Հնարաւոր է, որ Աֆանասի Ապոզեանը հանգրուանել է իմ եղբօր՝ Սերոբ Գէորգեանի մօտ, սակայն ես որոշակիօրէն չեմ կարող ասել, թե որտեղ է նա հանգրուանել, քանի որ ես չեմ յիշում:

Հ: Ձեզ և ձեր եղբօր միջոցով էլ յայտնի չեղան, թե Երևանում որտեղ է հանգրուանել Աֆանասի Ապոզեանը:

Պ: Աֆանասի Ապոզեանի գալով ես բոլորովին չէի հետաքրքրում, դրա համար էլ չգիտէի, թե որտեղ է Աֆանասի Ապոզեանը հանգրուանել:

Հ: Որքան ժամանակ է Աֆանասի Ապոզեանը Երևան քաղաքում և «Կարմիր

⁵⁰ Ստորագրութիւն չկայ:

հովիտ» կոլտնտեսությունում գտնուել:

Պ: «Կարմիր հովիտ» կոլտնտեսությունում Աֆանասի Ապոզեանը կարծես թէ մնաց 2-3 օր: Իսկ թէ որքան ժամանակ է ապրել Երևանում՝ ասել չեմ կարող:

Հարցաքննության արձանագրությունը գրուած է իմ խօսքերով և ճիշտ է, ինձ հասկանալի ռուսերէն լեզուով ինձ համար կարդացել են, որի համար ստորագրում եմ: Ա. Գէորգեան: Ստորագրություն:

Հարցաքննել է

ՊԱՎ IV բաժնի I բաժանմունքի օպերիւիւզօր, պետանվտանգութեան կրտսեր լէյտենանտ խտորագրութիւնն անընթեռնելի է]:

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 2056, թ. 38 և շրջերեսը: Ձեռագիր: Բնագիր: Թարգմանութիւն ռուսերէնից:

ԹԻՒ 10

[ԱՐՏԱՇԷՍ ԳԷՈՐԳԵԱՆԻ ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ]

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀԱՅԿ.[ական] ԽՍՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂԿՈՄԻ ՏԵՂԱԿԱ,

Պետական Անվտանգութեան մայր

ԳԷՈՐԳՈՎ

1937 թ. օգոստոսի 4

N. 19321 քննչական գործով

Արտաշէս Գալուստի ԳԷՈՐԳԵԱՆԻ մեղադրութեան

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

ԵՄ Հայկ. ԽՍՀ ՆԳԺԿ ՊԱՎ 4[-րդ] ԲԱԺՆԻ 1[-ին] ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ, Պետ.[ական] Անվտանգութեան Կրտսեր Լէյտենանտ Պ. ԱԲՈՒԼԵԱՆՍ, 1937 թ. օգոստոսի 9-ին քննելով Էրզրումի նահանգի Խոտորջուր գիւղում (Թուրքիա) 1894 թ. ծնուած դաշնակ-ահաբեկիչ Արտաշէս Գալուստի ԳԷՈՐԳԵԱՆԻ՝ բնակուող Հայկ. [ական] ԽՍՀ Ն.[երթին] Ախտայի շրջանի «Կարմիր հովիտ» կոլտնտեսությունում, մեղադրական քննչական գործը, պարզեցի հետևեալը.

Մեղադրեալ Արտաշէս ԳԷՈՐԳԵԱՆԸ, լինելով ամէնից ակտիւ դաշնակներից մէկը, «Դաշնակցութիւն» կուսակցութեան Վրաստանի Կ.[ենտրոնական] Կ.[ոմիտէի] որոշմամբ 1922 թ. Թբիլիսի քաղաքում իրականացրել է ահաբեկչութիւն Թուրքիայի ռազմական նախարար Ջեմալ Փաշայի նկատմամբ, ինչի հետևանքով Թուրքիայի և ԽՍՀՄ-ի միջև կոնֆլիկտ է ծագել:

1928 թ. լինելով «Խոտորջուրեան կոմունայի» անդամ՝ իր եղբայրների հետ համատեղ պարբերաբար կողոպտել է կոլտնտեսութեան սեփականութիւնը, ինչը փաստօրէն կոմունային հանգեցրել է քայքայման: Դրա համար նա դատապարտուել է Հայ.[աստանի] նախկին ՊԲՎ կողմից 3 տարուայ⁵¹:

Գտնուելով մտերիմ փոխարաբերութիւնների մէջ ներկայումս գնդակահարուած տրոցկիստական-ահաբեկչական կենտրոնի անդամ Ա. ԲԱԿՈՒՆՅԻ հետ, նախատեսնուել է որպէս ահաբեկչական տարր ՀամԿ(բ)Կ ԱԵԿ⁵² Քարտուղար ընկ. ԲԵՐԻԱՅԻ նկատմամբ ահաբեկչական գործողութիւն իրականացնելու համար:

Խուզարկութեան ժամանակ ԳԷՈՐԳԵԱՆԻ բնակարանում յայտնաբերուել է Տրոցկու, Զինովկի և այլոց հ[ակա]-յ[լեղափոխական] գրականութիւն:

51 Բանտարկութեան:

52 Անդրկովկասեան երկրամասային կոմիտէ:

ՈՐՈՇԵՑԻ

Արտաշէս Գալուստի ԳԷՈՐԳԵԱՆԻ մեղադրականի քննչական գործը ուղարկել
Հայկ. ԽՍՀ ՆԳԺԿ Եռեակի քննութեանը:

ՊԱՎ 4[-րդ] ԲԱԺՆԻ 1[-ին] ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ
ՊԵՏ. Անվտանգութեան կրտսեր լէյտենանտ՝ Աբուլեան [ստորագրութիւն]

«ՄԻԱՆՈՒՄ ԵՄ»

ՊԱՎ 4[-րդ] ԲԱԺՆԻ 2[-րդ] ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ
ՊԵՏ. Անվտանգութեան աւագ լէյտենանտ՝ Թովմասեան [ստորագրութիւն]

«ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ»

ՆԳԺԿ ՊԱՎ 4[-րդ] ԲԱԺՆԻ ՊԵՏ
ՊԵՏ. Անվտանգութեան աւագ լէյտենանտ՝ Կոստիկեան [ստորագրութիւն]

ՏԵՂԵԿԱՆՔ: Ձերբակալուած Ա. Գ. Գէորգեանը բանտարկուած է Հայկ. ԽՍՀ
ՆԳԺԿ ներքին բանտում 1936 թ. դեկտեմբերի 25-ից⁵³:

ՊԱՎ 4[-րդ] ԲԱԺՆԻ 1[-ին] ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ
ՊԵՏ. Անվտանգութեան կրտսեր լէյտենանտ՝ Աբուլեան [ստորագրութիւն]
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 2056, թ. 39: Մեքենագիր: Բնագիր: Թարգմանութիւն
ռուսերէնից:

ԹԻՒ 11
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԳԺԿ ԵՌԵԱԿԻ ՆԻՍՏ

Քաղուածք N. 2 արձանագրութիւնից
1937 թ. օգոստոսի 13

ԼՍԵՑԻՆ

32. Հայկ. ԽՍՀ ՆԳԺԿ ՊԱՎ 4-րդ ԲԱԺՆԻ N. 19321 գործը՝ 1894 թ. ծն. Արտաշէս
Գալուստի ԳԷՈՐԳԵԱՆԻ մեղադրականի:

Մեղադրում է այն բանում, որ լինելով Խոտորջութեան կոմունայի անդամ, պար-
բերաբար թալանել է կոլտնտեսային սեփականութիւնը, ինչը հանգեցրել է կոմունայի
քայքայմանը: Տրոցկիստական-ահաբեկչական կենտրոնի հետ մտերիմ յարաբե-
րութիւնների մէջ գտնուելով, նախատեսուել է որպէս ահաբեկչական տարր ՀԱԿ(ք)
Կ ԱԵԿ Քարտուղար ընկ. Բերիայի դէմ ահաբեկչ.[ակնն] ակտ կատարելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ

Արտաշէս Գալուստի ԳԷՈՐԳԵԱՆԻՆ – ԳՆԴԱԿԱՀԱՐԵԼ:
Ճիշտ է՝
Հայկ. ԽՍՀ ՆԳԺԿ Եռեակի քարտուղար: Ստորագրութիւն⁵⁴: Կնիք:

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 2056, թ. 40: Մեքենագիր: Պատճէն: Թարգմանութիւն
ռուսերէնից:

53 Փաստաթղթի վրայ ձեռագիր ատկացուած է՝ «Ձերբակալուած է 1936 թ. դեկտեմբերի 23-ին»:
54 Ազգանունն անընթեռնելի է:

**ԹԻՒ 12
ՔԱՂՈՒԱԾՔ ԱԿՏԻՑ**

Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ Եռեակի 1937 թ. օգոստոսի 13-ի որոշումը Արտաշէս Գալուստի Գէորգեանի գնդակահարութեան մասին ի կատար է ածուել 1937 թ. օգոստոսի 14-ի լոյս 15-ի գիշերը ժամը 2-ին:

Հայ. ԽՍՀ ՆԳԺԿ ՊԱՎ 8-րդ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ՊԵՏ.[ալկան] Անվտանգութեան Լէյտենանտ
Գրիգորեան [ստորագրութիւն]

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 2056, թ. 41: Մեքենագիր: Բնագիր: Թարգմանութիւն
նուսերէնից:

**ԹԻՒ 13
[ԱՐՓԵՆԻԿ ԳԷՈՐԳԵԱՆԻ⁵⁵ ԳԻՄՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԴԱՏԱԽԱՋՅԻՆ⁵⁶]**

Հանրապետական դատախազին
Վ. Սուրէնեան N. 4 հասցէում բնակուող
Քաղաքացուի Արփենիկ Ալեքսանդրի Գէորգեանից

ԳԻՄՈՒՄ

Իմ ամուսնուն՝ Արտաշէս Գալուստի Գէորգեանին, 1936 թ. դեկտեմբերի 23-ին ձերբակալել են ՆԳՆ մարմինները և մինչև օրս ոչ մի տեղեկութիւն չունեմ: Ես նրա հետ ապրել եմ 10 տարի և ճանաչում էի նրան որպէս Խորհրդային իշխանութեանը նուիրուած և ազնիւ քաղաքացու: Դա կարող են հաստատել նրա բազմաթիւ ընկերները: Խնդրում եմ վերանայել նրա գործը և եթե հնարաւոր է՝ արդարացնել նրան որպէս ազնիւ խորհրդային քաղաքացու:

Ց.Վ.[19]56 թ.

ք. Երևան

Ա. Գէորգեան [ստորագրութիւն]

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 2056, թ. 42: Ձեռագիր: Բնագիր: Թարգմանութիւն
նուսերէնից:

**ԹԻՒ 14
[ՌԱԶՄԱԿԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՀԽՍՀ ՊԱԿ-ԻՆ]**

Գաղտնի
Օրինակ N. 2

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԽ ԱՌԸՆԹԵՐ ՊԱԿ ՆԱԽԱԳԱՀ
ԳՆԴԱՊԵՏ
Ընկ. ԲԱԴԱՄԵՆՑԻՆ⁵⁷

Մեր կողմից ստուգում է Արտաշէս Գալուստի Գէորգեանի մեղադրականի վերաբերեալ գործը, ով ձերբակալուել է Հայկ. ԽՍՀ ՆԳԺԿ մարմինների կողմից 1936 թ. դեկտեմբերին հետևեալի համար.

55 Արտաշէս Գէորգեանն ու Արփենիկ Ռոստոմեանն ամուսնացել են 1923 թ. մարտի 18-ին: Նրանք զաւակ չեն ունեցել:

56 Դիմումի վրայի մակագրութիւնն անընթեռնելի է:

57 Գէորգի Բաղամեանցը Խորհրդային Հայաստանի Պետանվտանգութեան կոմիտէի նախագահն էր:

ԱՐՄԻՎ

Թ. (ԺԵ) ԴՄԱՐԻ, ԹԻՎ 3 (59), ԽՈՒԽ-ԱԵԱՊՐԵՆԵՐ, 2017

ՎԿԱ ԽԱՄԱԽԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՈՒԵԱ

1922 թ. Թբիլիսի քաղաքում Թուրքիայի ռազմական նախարար ԶԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ նկատմամբ ահաբեկչություն իրականացնելու համար, որի հետևանքով Թուրքիայի և ԽՍՀՄ-ի միջև հակամարտություն է ծագել,

«Խոտորջուրեան կոմունայից» գոյքի կողոպուտի համար,

Բերիայի նկատմամբ ահաբեկչություն նախապատրաստելու համար:

ԳԷՈՐԳԵԱՆԻ մեղադրական գործում նշուած յանցագործությունները կատարելու մեջ նրան մերկացնող ոչ մի տուեալ չկայ:

Վերոնշեալի կապակցութեամբ խնդրում եմ հաղորդել N. 19295 զինուորական մասի Ռազմական Դատախազութեանը, թէ ինչ օպերատիւ նիւթերի էք տիրապետում Դուք ներկայումս ԳԷՈՐԳԵԱՆԻ ձերբակալութեան առթիւ: Ձեր մօտ այդպիսի տուեալների առկայութեան դէպքում խնդրում եմ մեզ հնարաւորութիւն տալ դրանց հետ ծանօթանալու:

Պատասխանը խնդրում եմ չուշացնել:

ԱնդրձՕ⁵⁸ ՌԱԶՄԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶԻ ԱԻ.[ազ] ՕԳՆ.[ական] ՅԱՏՈՒԿ ԴԱՏՈՒԱԾՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ

Ալեքսանեան [ստորագրութիւն]

14 յունիսի 1956 թ.

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 2056, թ. 43: Մեքենագիր: Բնագիր: Թարգմանութիւն ռուսերէնից:

58 Անդրկովկասեան զինուորական օկրուգ: